Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1370

1999

ԼԷՕԹ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԻԿ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Յ. Խ. Փ. ՄԻՐԶԱԲԷԳԵԱՆՑ.

1795.

Հատոր Ի.

1875

ԲԱԳՈՒ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ն. ՄԱԼԱՖԷԵԱՆՑ։

Дозволено Цензурою. Тифлисъ, 7-го Іюня 1875 го года.

ՀՍ 1373
41370-ա

ԻԻՐ ՀՕՐԵՂԲՕՐ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԵՒ ԻՒՐ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԾՆՈՂԱՑ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆՈՒԻՐՈՒՄԷ

ՀԵՂԻՆԱԿԸ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

I, Յառաջաբանի տեղ. I

Ա. Մասն.

2, Դիմառնութիւն անցորդ տարւոյն դէպի նորը. . . . . .
3, Կամակոր . . . . . .
4, Կորցրած ժամանակ. 6
5, Գերեզման և դաղաղ. . . . . .
6, Խօսակցութիւն ուղեցուցիչ և ուղեւորաց 12.
7, Տեսիլ . . . . . 19.
8, Զար նախանձ. . . . . 30.
9, Աղքատացած պարոն. . . . 33.
10. Բարի նախանձ. . . . . 37.
11, Պօէտ (Բանաստեղծ). . . . 40.
12, Երգ. . . . . 42.
13, Նոր տարի. . . . . 44.
14, Երկայրի սուրից լեզուն աւելի՛ վատ է 47
15, Խաբուած յոյս. . . . . 51.
16, Վիճակ դառնաշխատին.. . . 54
17, Տխուր զգացմունք (1). . . . 60.

(1) 2-րդ տան 3-րդ տողում „ Զէք “ բառից յետոյ „ ոք “ բառը դուրս ընկածէ սխալմամբ։ Նոյնպէս

18, Ողբալից բանք սուրբ Աստուածածնի վանից Մեյսարու. . . . . 61.
19, Լուսին. . . . . 64.
20, Պատասխանի,, Տեսչեան՝՝ Սեյեատի. Շամախեցւոյ,, , , , . . 67.
21, Շամախին. . . . . 72.

Բ. Մասն.

22, Նմանութիւն ,,Վարդ գարնան ծաղիկ՝՝-ին 77
23, Քուն և Մահ. . . . . 81.
24, Կարապ, կռնկաձուին և խեցգետին . 85.
25, Արիւծ և մուին, , , , , 87.
26, Ամենից առաջ, , , , , 91.

Գ. Մասն.

27, Մաթոս և Թամար. . . . . 93.

գտանվումեն և մի քանի տեղերում աչքից սահված տպագրական սխալներ -օրինակի համար դուրս ընկած և իւրեանց տեղում չդրուած տառեր, որոնց մասին խնդրումենք մեծարգոյ ընթերցողներից ներողամիտ լինել:

ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՏԵՂ.

Սիրելի՛ ընթերցող, եթէ սեպուհ պարտականութիւն է, որ իւրաքանչիւր անհատ իւր կարողութեան չափ օժանդակ լինի իւր Ազգին իւր ունեցած քանքարովը, մէկը նիւթապէս, միւսը բարոյապէս, մէկը նիւ, միւսը գործով և արդեամբ, ուրեմն և ինձ սատանում է մասն ինչ յիշեալ պարտականութիւնների մէկից այսպէս, այսինքն ձգել մեր Ազգային գրականութեան գանձանակի մէջ երբեմնապէս լումաներ: Մեզանից Շիլլեր, Շեքսպիր, Գեօթէ չէ լինելու: Բայց մի հասարակ հեղինակ և կամ բանաստեղծ լինելը կարծեմ ամօթ և նախատինք չպիտի համարուի մեր Ազգութեանը. ,, Որում շատ տուաւ, շատ խնդրեսցի, որում բաղում, առաւել ևս պահանջեսցին 'ի նմանէ:"

Այս անգամ իմ լուման,,ՊԱՐՏԻԶԻԿ՝՝ անունով մատուցանումեմ Ձեզ, որը համարվումէ ազատ ժամերի քրտինքով գոյացրած պտուղներ: Դորան բաժանեցի երկք մասն. Առաջին մասնումը գետեղեցի զանազան առարկաների վերայ իմ խօսած բանաստեղծութիւններից, Երկրորդ մասումը իմ փոխադրութիւններից, որոնք ունին բարոյական կողմն. իսկ երրորդ մասն բովանդակումէ մրոզջապէս ,,Մաթոս և Թամար՝՝ վերնագրով պատմական բանաստեղծութիւնս:

Եթէ այդ ,,ՊԱՐՏԻԶԻԿԻ,, մէջ, սիրելի՛ ընթերցող, քո ախորժակին սովոր և քաղցրահամ պտուղներ շատ սակաւ պատահելու լինին, խնդրումեմ ներողամիտ աչքով նայել, պատճառ, անկարելի է, որ մի պարտիզկի մէջ ամենայն տեսակ բոյսերը լինին ընդհանրապէս առողջ, գեղեցիկ տեսլեամբ, քաղցր ճաշակով և անուշ հոտով. կպատահին, որ մին ներքուստ միւսը արտաքուստ ունենան պակասութիւններ։ Եւ եթէ դա օգուտ չկարողանար բերել թէ ընթերցողին և կամ գրականութեանը, գո՞նէ շատերի նախանձը կարող է գրգռել, որ դորանից գերազանցը և յարմարը ժամանակիս պահանջման յերևան հանել եռեռոնեան Հայկական գրականութեան հորիզոնի վերայ, որ մնա է լուսաւորութեան արշալուսին։

Ցանկացող այդ յուսոյ իրագործվելուն
Մնումեմ Ազգիս խոնարհ ծառայ
Խորէն Քահանայ Միրզաբէգեանց։

1875 ամի
13 Մայիսի
'ի Բաղու։

ՊԱՐՏԻԶԻԿ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՏԻԶԻԿ

Դիմառնութիւն անցորդ տարեոյն դէպի նորը։

Ահա եղբայր, իմ շրջանը լրացաւ,
Արեգական կամ տուերի պէս անցաւ,
Եկ այժմ դու քո շրջանը դարձրէ՛ր,
Կամ թեւիդ տակ մի առ ժամանակ պահի՛ր։

Քեզ այս պատուէր նախ աւանդեմ, սիրելի՛,
Որ դու լինիս միայն ժուժկալ, մտօք լի.
Տա՛ր որքան և նղովք անէծք թունալի
Քեզ միշտ կարդան նոքա, որք չարեօ՛ք են լի։

Որովհետև որքան առատ լինիս դու.
Կամ լաւ թեամբ լինիս թէպէտ ոսկետու.
Քեզ կկոչեն չարագուշակ մարդիկը
Բուի հրեշտակ, կամ կոյր բախտով որպէս բու։

Մէկը յաջող իւր ընթացքում՝ քեզ կօրհնէ,
Միւսը ձախող իւր գործերում՝ կանիծէ.
Մէկը պարարտ բարի սերմեր կցանէ.
Միւսը տատասկ, փուշ, որոմն կհնձէ։

Մէկը սիրոյ ծաղիկ սերմնած իւր սրտում,
Միւսը նախանձ, հեռ, բամբասանք է սիրում,
Մէկը մէկին տուն շինել է աշխատում,
Միւսն մէկի շինած տունն է քակտում։

Մէկը խաղաղ հոգւով արի իւր գործում,
Միւսը պղերգ փողոցներում միշտ շրջում,
Մէկը անքուն իւր հոգսերով մեծ ջանքում,
Միւսը թմրած խոր քնի մէջ է մնում։

Մէկը զղջմամբ սրտի մտօք Աստուծոյն
Աքսաւորի նման մ ե ղ ա յ է ասում։
Միւսը պարծանքով, կրքով, եսով, անհուն
Իւր լեզուաւը իւր գլուխն է գովում։

Մէկը իրա աչքի գերան չէ տեսնում,
Միւսը շուտով շիւղ ընկերին նշմարում,
Մէկը իրա մրոտ դէմքին անծանօթ,
Միւսը այլոց զուր անխնայ է դատում։

Մէկը մէկի համար բարի է խորհում,
Միւսը միւսին նենգաւ դարան է գործում,
Մէկը խեղճին դութը շարժած օգնում է,
Միւսը անզութ շատերին իսկ զրկում։

Մէկը մէկին խորխորատից հանում է,
Միւսը նորան շուտով կրկին ձգում է,
Մէկը մէկի ախտը դեղով բուժում է,
Միւսը միւսին առողջ սիրտը խոցում է։

Ա՛ռ դու ձեռդ ուղիղ կշեռ կշռելու,
Ճշմարտութեամբ լաւ նայելով նժարին, (1)
Տե՛ս թէ արդեօք մեա՞ն առանց շեղելու,
Կամ գարտուղի (2) չէ բնաւին մէտ (3) նորին։

Ա՛յս գործերին այս կրքերին ես տեղեակ
Հաղիւ եղէ իմ շրջանում բովանդակ.
Հերթակալո՛ղ դու իմ եղբայր սիրելի.
Տա՛ր անխռով քո ընթացքը բերկրալի։

Գիտեմ անշուշտ, նոյնպէս և դու կաւանդես
Յաջորդ սարոյն, ինչպէս քեզի արդէն ես . .
Եթէ բարի կամ եթէ չար կտեսնես,
Մի՛ վրդովվիլ, դի քեզ կանուխ ցոյց ես։

---

(1) կշեռքի թաթ

(2) ծուռ.

(3) չ'ան

Ողջոյն բարի, խաղաղութեան, հաշտարար,
Շո՛ւտ տարածիր, թո՛ղ զուարճանայ աշխարհ։
Ով կընդունէ թո՛ղ ընդունի կամակար,
Որով լինի իւր ցաւերին հոգատար։

Քեզ պատմելով այս ամենը հեռանամ
Անդարձ երկիր, ուր շատերին միանամ,
Ուստի այժմ իմ հրաժարական ողջոյնը
Քեզ յիշատակ թողլով արդէն հնանամ։

18¹²/₂₂67.
'Ի Շամախի։

ԿԱՄԱԿՈՐ.

Թէ և հազար մարդ լինին
Դարձնել կամակորին
Իւր խիստ յամառ կամքիցը
Չկարենան բնաւին։

Կամակորի սիրտն ինչպէս
Դարբնի սալ է պնդապէս.
Որքան կռան դու խփես,
Կպնդանայ ամբապէս։

Ա՛ռ և քեզ հետ շատ քեզ պէս,
Տո՛ւր նորան փասատեր պէսպէս,
Նորա սիրտը քարի պէս
Կակղացնել կարող չես։

Որքան ճիգն որ թափես,
Եւ կար նորա թէ չափես,
Զուր քեզ այնու կ'խաբես,
Նորա համար տմարդ ես։

Ի՞նչ օրինակ ի՞նչ համոզ
Կարեն նորան ամոքել,
Կպնդէ նա որպէս խոզ,
Որ կարենայ քեզ թեքել։

Շատ ապացոյց գրքերէն
Ընտրի՛ր լաւն հաղարէն,
Դի՛ր առաջի հեղօրէն,
Դեռ յամառի կուրօրէն։

Մինչև յարմար իւր կամաց
Զարտայայտես դաղտնին բաց,
Այնուհետև արտալած
Գնդքէ լինիս բաց ի բաց։

Աչք այնպիսւոյն շանթակէզ
Դառն նայէ դէպի քեզ։
Եւ շատ խորհուրդ խեղաթիւր
Կբարդէ նա դէզադէզ։

Ուրեմն զո՛ւր կՁանաս
Կամակորին համոզել.
Զուր կանցնին թէ իմանաս,
Զգացմունքդ, ՁանՁդ էլ։

Ի Շամախի 1868 ամի

ԿՈՐՑՐԱԾ ԺԱՄԱՆԱԿ.

Ինչո՞ւ այդպէս ո՛վ ժամանակ անցաւոր,
Անհետացար, էլ չերևիս ինձ այսօր,
Երբ զու այդպէս արագ պիտի թռչէիր,
Գոնեա կանուխ ինձ մի խորհուրդ կտայիր։

Ո՛վ խուզարկու (1) մարդ զգալի, մի՛ ի զուր
Զգեր քո մէջ հալող, մաշող, կիզող հուր,
Թէ զանցելոյն հոգաս խորհիս այդպէս սուր,
Անցեալն էանց, ցամաքեցաւ ըղձիդ ՁուրՁ։

(1) մտածող քննող

Թէ զգալով կարդաս աւաղ հազարով,
Թէ խորհելով ճնշես քո սիրտ անդադար՝
Իմա՛, օգուտ չե՛ս ստանալ միշտ լալով,
Բա՛ց քո խիղճը կՁշկանդելուց անարդար։

Թէ ծարաւի հետազօտես դտնելուն
Վաղանց օրերդ, և փափագիս դառնալուն,
Զուր հակառակ դու օրինաց բնութեան
Մի՛ վարվիր, մի՛, մի՛ քեզ դՁալի և սահման։

Ալեկոծեալ նաւի նման ՝ի շուար,
Միշտ մտատանջ տարաբերեալ քարէ քար,
Վասն անցելոյն քեզ մի՛ ՁդՁեր սարէ սար,
Գէ՛թ ներկայով փութա՛ առնել ըղձիդ ՁարՁ։

Անցեալն էանց, էլ չի դառնալ բնաւին,
Քեզ երեկը էլ չի կրկնուիլ, ո՛չ կեանք հին
Կարեն դառնալ և սիրվանք քո սրտին.
Ո՛չ բերկրութեան շարժառիթներ անՁիդ սին։

Ո՛չ մտածմունք, ո՛չ թառաչը և ոչ սուգ,
Թէ կուզ որքան աչք քո թորեն արտասուք,
Թէ ցաւակից լինին անգամ՝ քեզ և բուք,
ՁԵ՛ն կարող և նոքա դարձնել կենացդ շուք։

Թէ դայ շուտով չքնաղ գարունն ազնիւ,
Եւ զարդարէ երկիրը վաղ գիշեր տիւ,
Յայնժամ դու, ո՛վ խղճուկ մարդ ըղձալի,
Կզուարճանաս կուրախանաս ի՞նչ դու ի՞նչ:

Գիտեմ անշուտ և հին գարուց յիշատակ
Պէտք է զգաս, երբ կփչէ զեփիւռն,
Խորասուզված մտքիդ ծովում անյատակ,
Պիտի ըմպես բաժակ կծու խիստ դառն:

Եւ ծառերի սոսափիւն խսկ փարելն
Եւ դաշտերի կանաչ զգեստը զուարճալի
Յիշել կտան սրտիդ խորքում կորցած ժամ...
Որով կանցնին ներկայ կեանքդ վշտալի:

Ի Շամախի 1868 ամի:

ԳԵՐԵԶՄԱՆ ԵՒ ԴԱԳԱՂ.

Ո՛վ կեղծաւոր շքեղ դագաղ զարդարուն,
Ո՞ւր կբերես այդ մարմինը այդ փծուն (1)
Քանի որ դա կենդանի էր և սիրուն,
Ցիս ճանապէ՞ր, կամ քեզ արդեօք, կամ Հոգւոյն:

Երբ դա բացեց իւր աչքերը սրատես,
Փառք ու պատիւ միշտ մեծութիւն որոնեց,
Հպարտ մտքով դա մեզ արեց շուտ անտես,
Երբ որ դորանց կեղծուպատիր ձեռք բերեց:

Գիտէ՞ր արդեօք իւր առաջուան վիճակը.
Կամ կտեսնէ՞ր մերկ աղքատին իւր ակը,
Եւ այն կուրին, որ իւր ձեռում մահակը,
,,ՈՂՈՐՄԵՑԷ՛Ք" կասէր այն խեղճ էակը:

Երբ հնստէր հարուստ սեղան հացալի,
Իւր առաջև տեսակ տեսակ ըմպելի,
Գիտէ՞ր արդեօք թէ կան շատեր սգալի,
Նօթի, սոված, մերկ և սառած ցաւով լի:

(1) անպիտան.

Երբ կբազմեր աթոռ շքեղ զարդարուն,
Երբ կսիրեր ոսկի, արծաթ, փառք անհուն.
Եւ իւր կեանքը քնքուշ փափուկ միշտ սիրուն,
Գիտէ՞ր վինճակ դառնաշխատին այն անքուն։

Երբ պանուելով կանցուցաներ իւր կեանքը,
Միշտ զրկելով խղճուկ վարձկան աղքատին,
Որդնի համար պարարելով իւր կեանքը,
Մի՞թէ կօգներ այն խղճալի անհատին։

Երբ անցաւոր սին մամոնայն աշխարհի
Պաշտեր յուսով իբրև անմահ ինչ բարի,
Գիտէ՞ր արդեօք, թէ դերեզման յայս իմ ծոց
Պիտի այսօր լոյս իւր աչաց խաւարի։

Երբ սիգաձեմ իւր ընթացքը կատարեր,
Ոտիւք, ձեռօք, երբ լեզուաւ մեծաբաներ,
Մի՞թէ յայնժամ գիտեր զիւր գործ, զինչ առներ,
Կամ գերեզման կամ մահ օրհաս գէ՛թ գիտէ՞ր։

Տեսե՞ր արդեօք, երբ անխնայ առելով
Աղքատ, ծառայ, պանդուխտ, օտար կզրկեր,
Եւ շատ աչքեր դառն արտասուօք թանալով,
Չէ՞ որ դա էր պատճառ խոցող պարզ սրտեր։

Ա՛խ, թէ որքան անագորոյն անգութ էր,
Մինչ զի զընկեր օձի նման կ'խայթէր,
Թէպէտ որքան դա միշտ լինէր խղճահար,
Բայց զայն առնէր, զոր չարք սիրեն միշտ և յար։

Ա՛յս պատճառաւ քեզ կանուանեմ կեղծաւոր,
Որ իմ ցաւը նորոգումես բիւրաւոր,
Մի՞թէ դորա դժոխային գործերը
Քեզ չեն յայտնի, որք են մեղօք բեռնաւոր։

Մի՞թէ դա չէր, որ խղճամեռ որոգայթ
Միշտ կնիւթէր, թէ յայտնապէս և թէ գաղտ,
Եւ անխնայ շատ արիւներ աստ և անդ
Իրա ձեռքով ջանայր թափել և անյայտ։

Ի՞նչպէս առնեմ դա իմ ծոցը, ու գդուեմ,
Եւ պահպանեմ թշնամիներից աներկիւղ,
Որ ընդդէ՛մ է խղճի մտաց, թէ առնեմ,
Չի ո՛չ լապտեր դա ճանապէր և ո՛չ իւղ։

Նայի՛ր և տե՛ս կան իմ շուրջը ընկերներ,
Որոնք ունին իւրեանց ծոցում զոհվածներ,
Առաքինեաց, նահատակաց, կուսանաց,
Անմեղ մանկանց և սուրբ հարանց մարմիններ։

Նդքա այդ սուրբ մարմինները պաշտելի
Պահեն ինքեանք մինչ 'ի գալուստ Յիսուսի,
Ես այդ զաղեր պիղծ մարմինը գարշելի,
Ո՞նց տամ Տիրոջ, որոյ իսկ է ատելի:

'Ի Շամախի 1868 ամ:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՑՈՒՑԻՆ ԵՒ ՈՒՂԵՒՈՐԻՆ·

ՈՒՂԵՑՈՑ·

Նախ պէտքէ որ լաւ գիտենաս քո պարտքը,
Որ ինձ կամաւ հնազանդ լինիս անմռունչ,
Ճանաչելով քո պաշտօնը, իմ կարգը,
Քեզ արժան է գալ ետևիցս անտրտունջ:

ՈՒՂԵՒՈՐ

Դու ո՞ւր պիտի տանես ինձի, ո՛վ իմ հայր,
Որ ես քեզ չհետևիմ յօժարաբար,
Դու ինձ արդէն երևումես բարերար,
Ո՞նց կարողեմ ես քեզ լինիլ չարաբար:

ՈՒՂԵՑՈՑ

Այժմ ապրի՛ իմ սիրելի հեզ որդիս,
Որ խոստանայ հետևիլ ինձ և կամքիս,
Հիմա գիտեմ, որ հլու ես դու կարգիս,
Կհետևիս լինիլ նման և բարքիս:

ՈՒՂԵՒՈՐ

Խնդրեմ ասա՛, ո՛վ Ուղեցոյց ողորմած,
Ի՞նչ է քո կամք Ուղևորիս արդ յայտնած,
Պատրաստ եմ քեզ և հնազանդ քո կամաց,
Որովհետև խօսք քո յայտնեն քեզ զթած:

ՈՒՂԵՑՈՑ

Գիտե՞ս ո՛որդի, ես ծառայ եմ այն Տէրին,
Որ պարգ գիտէ ամենայն չարն ու բարին,
Նա քեզ համար ինձ ընտրեց առաջնորդ,
Որ դու լինիս և հպատակ և յետնորդ:

ՈԻՂԵԻՈՐ

Ինչպէս Նորան, նոյնպէս և քեզ եմ ծառայ,
Միայն դու ինձ ուղիղ ճամբայ բա՛ց արա.
Մինչև այնտեղ հաստատապէս և իմա՛,
Զե՛մ մոռանալ, չեմ զլանալ սէր Նորա։

ՈԻՂԵՑՈՑՑ

Ինձ տուած է սուրբ իրաւունք խօսելու.
Քեզ պիտոյ է խոնարհաբար լռելու,
Ես պատրաստ եմ քեզ ճանապարհ բանալու,
Համոզ խրատ իմ կամքի պէս քեզ տալու։

ՈԻՂԵԻՈՐ

Ո՞նց ճանապարհ դու ինձ պիտի բաց անես,
Կամ ի՞նչ համոզ և ի՞նչ խրատ կպատմես,
Տեսնենք արդեօք, և դու ինձ հետ կլինե՞ս.
Թէ ինձ մենակ լծի տակին կ'թողնես։

ՈԻՂԵՑՈԻՑ

Առանց ինձի դու չգիտե՞ս, որ կոյր ես,
Շիտակ գնալ քո ճանապարհ կարո՞ղ չես,
Քեզ ի՞նչ պէտք է, ինչ որ կասեմ, այն արա,
Իմ գործերը դու իմանալ ի՞նչ կանես։

ՈԻՂԵԻՈՐ

Իմ յարգելի՛, իմ ողորմած ուղեղոյց,
Ինչո՞ւ այդպէս ինձ կնայես բարկութեամբ.
Ես խնդրեցի թէ ճանապարհ դու ինձ ցոյց,
Եւ օգնու թիւն. . դիտել հարցրի քաղցրութեամբ։

ՈԻՂԵՑՈՑՑ

Դու չե՞ս լսել այն Տէրունական պատուէրը,
Թէ,, ինչ կասեն դու արա՛ այն ամենը,
Բայց մի՛ առներ նոցա գործած գործերը . . ,
Եւ մի՛ կորեր նրանցից բնաւ քո սէրը։''

ՈԻՂԵԻՈՐ.

Արդ իմացայ նպատակը քո որոնին,
Ինձ պատմելով այս պատուէրը թանկագին.
Քո ասելը այն չէ, որ ես հպատակ,
Իբրև անխօս գերի լինիմ կամքի տակ։

ՈԻՂԵՑՈՑՑ

Ես քեզ գերի չե՛մ համարիլ, սիրելի,
Գնա՛ արա՛ ամեն գործդ գովելի,
Այն գործերը, որ իմ կամքին չեն ընդդէմ,
Եւ Աստուծոյն և ինձ իսկ են հաճելի։

ՈԻՂԵԻՈՐ

Ուրեմն ես ինչ որ անեմ բարի՞ է,
Այնպէս միայն, ինչ որ իմ սիրտ կցանկայ,
Դա Աստուծոյն, քո ասելով. ընդդէմ չէ,
Ինչ որ քո սիրտ առնել սիրել կամենայ։

ՈԻՂԵՑՈՑՑ

Քեզ ի՞նչ պէտք է հակառակիլ իմ կամայ,
Ինչ որ կասեմ, դու այն արա սրտով բաց,
Դու չգիտե՞ս, որ ես Տէրից կարգուած եմ,
Քեզ խրատող քեզ Ուղեցոյց ընտրուած եմ։

ՈԻՂԵԻՈՐ

Ես յօժար եմ սրտի մտօք կատարել
Քո պատուէրը, քո խրատը միշտ յարգել,
Բայց ի՞նչ անես սրտիս միջում սուրբ քէշը (1)
Խիստ անաչառ ընտրումէ լաւն ու գէշը։

ՈԻՂԵՑՈՑՑ

Եթէ գտնուին այս աշխարհում հատընտիր,
Որոնց մինը ինձ խմացիր արժանընտիր.
Տե՛ս ո՞նց կատեմ ես իմ լեզուաւ աշխարհը,
Բարին օրհնած, կանիծանեմ և չարը։

(1) օրէնք

ՈԻՂԵԻՈՐ

Ո՛վ ողորմած Ուղեցոյց, դու առացիր,
Թէ " Մէկ անկնից ջուր միահերպ կրզլսէ,
Դու ինձ այդ այժմ որ պարզ կերպով յայտնեցիր,
Այդ խօսքերից ի՞նչպէս իմ սիրտ չվախէ։

ՈԻՂԵՑՈՑՑ

Քեզ առաջուց ես ասացի. սի՛րելիս,
Թէ միշտ սիրի՛ր առնել գործել զբարիս,
Քեզ պիտոյէ հոգալ միայն զեմ կարիս,
Եւ չմմանալ թէ զեմ բարիս թէ չարիս։

ՈԻՂԵԻՈՐ

Ուրեմն դու կամենումես մեռնապէս,
Սիրեմ, յարգեմ և բարութիւն առնեմ քե՞զ,
Գառնի նման քո ետևից ընկած ես,
Ուր որ գնաս, ինչ որ անես, լինիմ հե՞զ։

ՈԻՂԵՑՈՑՑ

Այո՛ այդ է իմ ըղձալի նպատակ,
Որ դու լինիս ինձ բնաւին հպատակ,
Դու ինձանից մի՛ պահանջիր գործելը,
Քեզ պարտ իմա իմ խօսքերին լսելը։

1795.

ՈՒՂԵՒՈՐ

Ես քո խօսքին պարտական եմ լսելու,
Ես քո պատուէր խոնարհութեամբ յարգելու,
Միայն խնդրեմ բեռնած բեռնիդ ծանրութեան,
Գո՛նեա անգամ ձեռդ ձգի՛ր օգնելու։

ՈՒՂԵՑՈՑ

Բեռն բեռնել իմ պարտքս է յարաժամ,
Բեռն կրել քեզ արժան է ամեն ժամ,
Իմ օգնելուն . . . հետաքրքիր մի՛ լինիր,
Քո պարտքերը դու հեզութեամբ կատարի՛ր։

ՈՒՂԵՒՈՐ

Այդ խօսքերով քեզ իմացայ փառասէր,
Խօսքո՛վ եղբայրասէր, գործով անձնասէր,
Թո՛ղ քո սիրտը չվշտանայ, ո՛վ իմ Տէր,
Ե՛կ կատարենք մենք միասին մեր պարտքեր։
Ի Շամախի 1868 ամի։



ՏԵՍԻԼ։

Առաւօտեան արշալուսին
Մինչ դիմէի, չգիտեմ ուր,
Բռնադատեց ինձ մի ծերիկ,
Դէպ մի պարտէզ հոտաբոյր։

Ուր բիւրաւոր դոյներ ծաղկանց
Յիշել տուին ինձ կեանք անանց,
Բայց և նոցա անուշ հոտով
Իսպառ մնայի ես զմայլած։

Ուրախութեամբ սիրտս թնդաց,
Միտքս թռաւ պէսպէս յուզմանց,
Երբ ծերիկն անակնկալ
Ինձ բերկրութեան դուռն երաց։

Քաղեց ծաղկունք կապեց 'ի փունջ,
Առաջարկեց ինձ զուարթաշէմ,
Թէպէտ լռիկ և անշշունչ,
Բայց երևիւր խորհրդապէմ։

Միտք ծերունեոյն շուտ անյապաղ
Զդալի եղև ինձ և յայտնի,
Ա՛յն է — հետևիլ անդանդաղ
Ուր նա ինքն դիմել կամի։

Տխրաուրախ կարապետիս
Մինչ հետևէի միամիտ,
Յանկարծ մի ձայն ասաց սրտիս,
„Թէ մի՛ պարծիր և դու անմիտ։“

Պտտելով այս պարտիզում
Հանդիպեցանք ծոխ դահերի,
Որ զարդարված շատ անկիւնում
Կսպասէին նատողների։

Ո՞ւր են արդեօք այս փառքերի
Ժառանգները, ո՛վ ծեր բարի,
Ինձ զարմանքով տխուր ծերին
Ես պարզօրէն շուտ հարցրի։

Կանգնեց ծերը հանդարտօրէն,
Յոգւոց հանեց խիստ դառնօրէն,
Զեռը պարզեց դահը դէպի.
Ասաց „և դու նստի՛ր որդի։“

Երբ ես նստայ դահի վերայ,
Սիրտս լցաւ զուարճութեամբ.
Կարծէի թէ անմահացայ
Մի անպատում երջանկութեամբ։

„Նայի՛ր որդեակ, ծերը ասաց,
Այս պարտիզի գեղեցկութեան,
Կարծես թէ մի վիճակ անանց
Ներկայացած է սա մարդկութեան։“

„Զուարճացի՛ր որքան կարես
Պայծառութեամբ այս պարտիզի,
Զի վաղ արդէն մեր առաջև
Կպարզուի մի լայն ասպարէզ։“

„Անդ կտեսնես հանդիսարան—
Քաղցր ու դառն տեսարան,
Եւ այս փառքի ժառանգներին,
Պատրաստված է գտղանի դարան.“

Սակայն իսպառ ես զմայլված
Պէսպէս հոտով սիրուն ծաղկանց.
Չգայի ես մի այլ վիճակ,
Քան զայն վանք ու դերազանց։

Ծերիկն ասաց “ բաւ է որդեակ,
Այլ՝ դահեկ, որքան մնացիր,
Ինձ հետևիր, ուր ես գնամ,
Մ՚ուտ այն դռնով, որ կբանամ։ “

Իմ ծերիկը երբ մտեցաւ
Շրջապատին բարձրադիտակ,
Կարծես դուռն ինքնին բացաւ,
Որ երևումեր ամրափակ։

Երբ ներս մտի, ո՜հ, ի՞նչ տեսի—
Մի ընդարձակ ասպարիզում
Անթիւ մանկտի մարդկան սեալ
Համեստ խաղով պարապվում։

Միւս կողմումը պատսպարան,
Բաց դռներով և աննման,
Կախած ճակտին մի վերնագիր,—
Կարդացի այդ ,,ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ։“

Ուր լռութիւն թագաւորած
Շուտով գրաւեց իմ հայեացք,
Բայց ինձ և մի յուսալի ձայն
Քաջալերեց տեսանել զայն։

Տեսակ տեսակ մանուկներով
Տեսի միջում դասաւորված,
Որոնք համեստ ջանքերով,
Ուր անխոնջ էին զբաղուած։

Աստ մի հոյակապ շինութիւն
Դարձեալ ունէր մի վերնագիր—
,, ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ.“
Ոսկեզօծած գեղեցկադիր։

Որպէս փայլուն իւր մակարդակ
Գրաւումեր արդէն մեր հայեացք,
Ներքին զրութեամբ և նոյնգունակ,
Փողփողումէին մեքենայք։

Որով կարծես դուշակվումեր,
Թէ մի Աղգի բախտ ու վիճակ
Դորա մէջը կաշկանդուած էր
Պահելու իւր նպատակ։

Այս լայն դաշտի և միւս կողմում
Հերկումէին քաջ մշակներ,
Առատապէս և սերմանում,
Ցանումէին պարարտ սերմեր։

Թաւշանման մարգագետին
Յանկարծ բացուեց մեր առաջին,
Ուր և հոսանք պարզ վտակաց
Իմ սիրտ և ուշք գրաւեցին։

Փոքր անցած նկատեցինք
Հովիւներուն և հօտերուն,
Ոմանց նիրհով քնած տեսինք,
Ոմանց արի, հսկող, արթուն։

Ասա մի յոգւոց ծերը հանեց,
Փոքր ինչ խոնջ տալով ոտից,
Եւ դէպի ինձ ձեռը պարզած
Ո՜հ, ապուշ միտքս կաղդուրեց։

Եւ եթերից արեգական
Ոսկեզօծող ճառագայթով
Մինչ փայլումէր հովիտն այն
Յանկարծ տխրեց աղօտ լուսով։

Քանի մի քայլ դեռ չի փոխած,
Մեր առաջև դեռ մի բացաւ,
Մինչ նայումէի զարմացած,
Տեսի ծերին միւս կողմն անցած։

,, Դեհ որդեակ իմ, դէհ ընթացի՛ր,
Քանի պարզ է, և դու անցի՛ր,
Ասա փոքր մի առնուենք հանգիստ,
Զի այս ուղին դժուար է խիստ ,,

Ասյս ասելով ծերը նստաւ
Գետի ափումը ընկղմելով,
Ուր և մի թառաչ հանելով,
Գոլորեց արտասուք իւր աչքից։

Շարժեց գլուխը տխրագին,
,, Դու գե՛տ անգութ ,, ասելով,
Որքա՞ն արիւն թանկագին
Անցայտ արեր քո հոսանքով։,,

,, Որքա՞ն աչքեր ծնողական
Աղի ջրով կուրացուցեր,
Եւ որքա՞ն մարմին պատուական
Քո սուր հոսանքով կորուսեր։,,

,, Գե՛տ դու, գոնէ քո Արարչից
Զվախեցա՞ր, անագորո՞ն,
Մի՞թէ չար անխիղճ մարդկանցից
Ուսար այդպէս բնութիւն։,,

„ Արի՛ արի՛ անբախտ որդիս,
Շարունակենք մեր այս ուղին,
Ուրքան նստենք, ցա՛ւ է սրտիս.
Չէ՞ սփոփվելու և իմ հոգին. . . “

Բարձրացաւ շուտով դէպի
Կարծես ստորոտ մի սև սարի,
Քաջալերեց և ինձ փութով
Լինել զգաստ, ժիր և արի։

Մինչդեռ և ես անհանդիստ
Այս Ստեփանեան ճանապարհ
Կընթանայի վշտացած,
Մի ընդարձակ դաշտ ու հովիտ
Մեր առաջև տեսի բացված։

Կարծես այստեղ մի յոյս վերին
Պիտի հասնէր մեր թիկունքին,
Եւ սփոփէր սրբելով
Արտասուքն աչքից իմ ծերին։

Բայց բազմութիւն արանց կանանց
Ուր իմ հայեացք զրաւեցին,
Աստ մի վիճակ թշուառ մարդկանց
Իմ ուշք ու միտքս խլեցին։

Ո՞հ, ի՞նչ եմ տեսնում բարի՛ ծեր,
Թշուառ, անտէր, որբ մանուկներ,
Դոքա մի՞թէ չունին այստեղ
Եւ տուն, և հարազատ հայրեր։ :

Դեռ արևը հորիզոնում
Փայլ էր տալիս ամպերին,
Լուսինը սիրուն հասակում
Այց էր եկել աշխարհին։

Կարծես թէ նա կարօտապէս,
Դէպ իւր եղբայրը լուսատու՝
Ընթանում էր արագապէս,
Սրտի փափաղն առնելու։

Երբ որ դոքա եղբայրական
Բարև համբոյր տուին միմեանց,
Շուտով հասպա հրաժարական
Ասաց արևն, էլ չերևաց։

Մինչդեռ լուսինը լողում էր
Պարզ երկնակամարի վերայ,
Մինչդեռ վառ անթիւ աստեղներ,
Խաղում էին շուրջը նորա ,

Բացեց բերանը իմ ծերը
Մի ծանր յոգւոց հանելով,
Պատմեց հանդարտ իւր վշտերը,
Իբր խոստովանք ասելով։

„Լսիր իմ հազարա՛ւ որդեակ,
Յիշի՛ր փառքն ու այն պարծանք,
Որոնց տէրերն մնանկ անանկ
Կրումեն այստեղ ցաւեր պէսպէս։„

„Դոցա որդիք մերկ ու բոբիկ,
Անտէր անճար թափառելով,
Որոնումեն զթած մարդիկ,
Ողորմութեան կարօտելով։“

„Կա՞ն արդեօք մարդիկ ողորմած,
Որ իւրեանց տուրք ողորմութիւն
Միայն զիտենայ ինքն, Աստուած
Եւ նա, որ ունի կարօտութիւն։“

„Կա՞ն արդեօք զթած իշխաններ,
Որոնց դատը լինի անաչառ,
Զի խեղճ այրին իւր դանդատներ
Կամի վճռել օրէնքով արդար։“

„Կա՞ն արդեօք բարի մշակներ,
Որք չունենային չար սերմեր,
Կամ նոցա ագարակի մէջ
Գէթ չգտանվէր որոմներ։“

„Կամ քաղցր արթուն հովիւներ,
Մխիթարուած իւրեանց հօտերով,
Կամ փոխադարձ յարմարութեամբ
Կապուած լինէին սուրբ սիրո՛վ։“

„Եւ վաճառականք բարեխառն
Ստանալով արդար վաստակ
Զշեղէին չափն ու կշիռն
Ունելով բարի նպատակ։„

„Կա՞ն և ճշմարիտ եղբայրներ,
Որոնց սիրտն ու լեզուն համաձայն
Գործ կատարէին շահարեր,
Տեղիք չտալով կրքին ունայն...“

Ես դրաւված ծերի խօսքերով,
Ընդունումեմ շուտ քաղցր քնով։
Որից սթափված տեսանումեմ
Ծերը չկայ. այլ երազում եղել եմ։

Ի Շամախի 1870 ամի։

ԳՐԱԴԱՐԱՆ

ԶԱՐ ՆԱԽԱՆՁ.

Զար նախանձը միշտ հակառակ ոգորի (1)
Բնութեան ընդդէմ իբրև անգութ թշնամի.
Թէ և խիղճը որքան սրտին միշտ բարի
Համոզ կարդայ, նա իւր կամքը կատարէ։

Թէ և խիղճը միշտ դատաւոր է արդար.
Զար ընթացքում հոգւոյն թէպէտ բարերար.
Բայց նախանձը օձի նման չարաչար
Սիրէ խայթել ընկեր եղբօր դարշապար։

Թէ տեսանէ բարի վիճակ ընկերին,
Կըշտանալէ որ շուտ հասանէ մեծ չարին,
Իրան համախոհ գտնելով շատերին,
Զգել կուզէ խեղճ ընկերից այն բարին։

Որի սրտում թագաւոր է նախանձը,
Միշտ անհանգիստ նա գտնում է իւր անձը.
Հեզ ժպիտը նորա շրթանց կարստած,
Տխուր դէմքին մաղձ կ'տեսնես թաղ դրած։

(1) բոզահարում է

Քաղցր հայեացք չունի երբէք այնպիսին
Դէպի բարին իւր ընկերին բնաւին,
Սիրոյ պտուղ ևոչ վարմունք երևին՝
Բաց ի թունից նորա լեզուին, երեսին։

Երբ տեսանէ իւր եղբօրը փառաւոր,
Դարան գործած շուտ մտանէ դարափոր.
Ուր շատ հնարք որի համար նիւթելով
Մղել կամի իւր նպատակ թունաւոր։

Թէ ընկերի հագին տեսնէ հագուստ լաւ.
Զար նախանձը խղճի ընդդէմ կառնէ դաւ.
Հազար խորհուրդ նորա սրտին ճնշելով
Տայ մտածել ունայն կարծիք. բարին քաւ։

Թէ համբաւեն բարի անուն ընկերին,
Կըորոնէ իսկոյն փաստեր այն խեղճին,
Չի աղճատէ այն բարիքը, որ ունի,
Կամ թէ իրան սեպհականէ, որ չունի։

Թէ ընկերի ձեռքում գտնէ հաց պատառ,
Կսկսէ ներբող կարդալ նա անձար,
Իւր խորամանկ գովեստներով նրան պէս...
Որ ագռաւին պանրի համար իսկ արար։

Գուցէ վճռեց բախտը քեզի արժանի
Ստուգանել հարուստ յաթոռ իշխանի,
Դէ՛ աղատուի՛ր չար նախանձի գնտակէն,
Որ դէպի քեզ կարկտի պէս արկանի։

Թէ ձիրք շնորհք ունիս քեզնում մասնաւոր,
Վա՛յ է քեզ վա՛յ . . . ունիս ոսոխ կամակոր,
Թէ գործ դնես, պիտի լինիս մնաւոր,
Չի նախանձը դորան վա՛ղ է նենդաւոր։

Պարզ մնաւոր. թէպէտ տէզը չի դաղուիլ
Զուալի մէջ. որքան ուզես լաւ ծածկել.
Բայց չար նախանձ սիրող մարդոյն մի՛ յայտնիր
Քո բարիքը, որ քեզ համար չի սիրել....

Ո՞ւմ կսիրէ չար նախանձը անպիտան,
Նրան, որին չկայ հոգի, խիղճ կենդան,
Որի սիրտը շինած իրա օթեւան,
Խիստ կմաշէ նորա կեանքը յաւիտեան։

Քեզ օրինակ ո՛ նախանձոտ, թո՛ղ լինի
Այն օձը, որ այգւոյ ծաղկէն մեռանի,
Նոյնպէս կարծեմ այլոց վնաս ո՛չ այնքան . . .
Որքան քեզի քո նախանձէն հասանի։
'ի Շամախի 1867 ամի։

ԱՂՔԱՏԱՑԱԾ ՊԱՐՈՆ։

Կար ժամանակ, սիգահեմ
Կատարէիր քո ընթացք,
Սիրտդ ուրախ զուարթադէմ,
Ունէիր դու պատիւ փառք։

Մինչ զրպանդ հարուստ էր,
Եւ սնդուկդ մինչ լի էր
Փայլուն ոսկւով արծաթով,
Ունէիր շատ բարեկամներ։

Պարոն Աղա բառերը
Կարծեմ քեզ էր սեպհական,
Յարգ ու պատիւ փառքերը
Քեզ կառնէին պատուական։

Ո՞ր աթոռը ո՞ր բարձը
Քո դալստեան չ'սպասէր,
Ո՞վ չէր սիրում քո դարձը,
Որ նուիրէր յարգ և սէր։

Ց. Խ. Բ. Մ. Պարտիզեկ.

Դահլիճներդ զարդարուն
Երգօք պարուք թնդային,
Ծառաներդ ժիր, արթուն,
Ի սպասու քեզ կային։

Եւ քանի՞ տեսակ խորտիկ
Լի էր սեղանդ պարելի,
Եւ ի՞նչ ազնիւ ըմպելիք
Զկային անդ լի ու լի։

Ո՞վ արդեօք ո՞վ երանի՞
Իւր բերնիցը չէր հանում,
Որով իսկ քանի՞ քանի՞
Աչքեր չէին քեզ նայում։

Մի՞թէ նժոյգ ձիանքդ
Պակաս էին ախոռում.
Յայնժամ փառաւոր կեանքդ
Տե՛ս քանի՞ սիրտ էր վառում։

Որդեակք թոռունք վարդի պէս
Աթոռիդ շուրջ ժողովված,
Շատ պչրանքներով պէսպէս,
Երանցով էիր զմայլված։

Միշտ դարուն էր քեզ համար,
Միշտ դալար էր վարդը քեզ,
Սոխակն էլ միշտ անդադար
Սիրով կերգէր դէպի քեզ։

Ո՞ւր են արդէն այդ բարիք,
Որք չերևին բնաւին,
Փոխան դոցա քեզ չարիք
Ընդէ՞ր կանուխ հասանին։

Ինչո՞ւ ինչո՞ւ վաղեմի
Բարեկամքդ սիրելի
Քեզնից հեռի են հեռի.
Մի՞թէ խեղճ ես կամ դերի։

Կամ թէ նոքա, որք յառաջ
Կ.յարգէին քեզ պատուով,
Ընդէ՞ր այժմ այդպէս քաջ
Քեզ անարգեն զարշելով։

Մինչև անգամ և նոքա-
Որոնք էին մերձակայ
Դառն նայեն դէպի քեզ,
Կանգնած արդէն բացակայ։

Որովհետև զուրկ ես դու
Քո առաջվայ փառքիցդ,
Ինչուր չունիս բան ազգու,
Ձի զուրկ ես ճոխ կեանքիցդ։

Իրաւ, կարծիք չունէիր,
Թէ կանցանէ այդ ամեն,
Նոքա, որոնց սիրէիր,
Այսօր կատեն քեզ ամե՛ն։

Երևի ամենևին
Ծանօթ չէիր աշխարհին,
Որ և քեզ պէս շատերին
Գլորել է բնաւին։

Սա մի պարտք է պաշտելի,
Եւ միշտ մտքում պահելի,
,, Թէ ով իսպառ պարծենայ,
Նա վերջումը զուրկ կմնայ։''

Ի Շամախի. 1868 ամի։

ԲԱՐԻ ՆԱԽԱՆՁ.

Կուրծքի տակին բաբախում է (1) անդադար
Այն, որ կոչի բարի նախանձ բարերար,
Մինչև անգամ ստիպում է և նորան
Արիանալ, որ ապրում է անսատար։

Թէ ծուլութեան նիրհով կամի ոք թմրիլ,
Իսկոյն նորա մտքին խթան կիսոթէ,
Մինչ նա ցանկայ իւր կեանք հեշտեաւ անցանել,
Կազդէ նորան ասելով թէ ,, ա մ օ թ է։ ''

Կձգէ շուտ նորա սիրտը մեծ եռանդ,
Որով կառնէ այն պղերգին ջերմեռանդ,
Հապա շուտով մանկական իսկ մտածմունք
Նորա համար կընին ունայն և անյայտ։

Գուցէ մէկը վառուած սիրով Ազգային
Կկատարէ գործ արժանի օգտաւէտ,
Դա չի թողուլ այլոց անմոռն բնաւին,
Այլ կստիպէ օժանդակիլ իսկ յաւէտ։

(1) Թակթակում է

Նա երջանիկ կ՚համարուի, որ ունի
Այդ բարիքը–այդ սիրելի նախանձը,
Որով կարէ զայն ստանալ, զոր չունի,
Եւ բարուքել իւր վիճակը, իւր անձը։

Ո՞վ արդեօք ո՞վ չի համբերել նեղութեան,
Որ կսիրէ այդ առիթը բարութեան,
Նորա համար սար, ձոր, ծով, ցամաք լայն...
Քաղցր է յուզել նպատակին իւր միայն։

Թէ տէսանէ յառաջադէմ վիճակում
Իւր առաքինի ընկերին խոհական,
Կհամոզէ իրան եւ նոյն կարգում
Հետեւիլ նորա ընթացքին ժրաջան։

Եթէ ունի բարի անուն իւր ընկեր,
Կյաւելու նորա սրտում գաղտնի սէր,
Յոր և ինքն կջանայ միշտ անհամբեր,
Գտնել պատիւ, բարի անուն բարերեր։

Ծոյլ գաւակդ թո՛ղ ուսանի նորա մօտ,
Որ ունի և այդ նախանձը գովական,
Եւ նորան կբուրէ շուտ արթնութեան հոտ,
Որ կընթանայ շաւղոք ուսման պատուական։

Բարի՛ նախանձ, քեզ սուր գիտեմ՚քան զթուր,
Որ կվառես մարդու սիրտը՝ որպէս հուր,
Սակայն յետոյ երբ կհասնի իւր ըղձին,
Կզովացնես նոյն իսկ սրտին տալով ջուր։

Ով քեզ չունի, բարիքներից զուրկ է նա,
Եւ իւր օգուտն ո՛չ կարենայ գիտել նա,
Այլ այնպիսին կարի թշուառ վիճակում
Կլինի միշտ, և անանուն իւր կեանքում։

Եթէ մի ազգ կամ որ քաղաք քեզ չունի,
Չէ՛ կարելի ասել նորան, թէ ունի
Ամենայն ինչ բարեմասնեայ, գործ արժանի,
Գործ ազգային–Դպրոց ասեմ կենդանի։

Ի Շամախի 1868 ամի

ՊՕԷՏ (ԲԱՆԱՍՏԵՂԾ)

Աղնի՛ւ պօէտ, ժուժկալ պօէտ, ինչո՞ւ այդպէս
Սիրտ ու անձդ սիրոյ կրակով կ'բոբրոքես,
Եւ կամ իսպառ խորասուզված մաքիդ ծովում
Զգիտեմ ի՞նչ վառված սիրով կըրոնես։

Ի՞նչ է արդեօք նպատակդ. յիշատա՞կ յաւերժական
Կամիս թողուլ կամ բարեհամբա՞ւ քո անուան,
Թէ կամք խղճիդ առնելով, կնուիրես
Նորան ազատութիւն և շունչ կենսակա՞ն։

Մի՞թէ պօէ՛տ, քեզնում այդ ձիր բնակա՛ն է,
Որ չես թողում մաքիդ անդամ առնու դադար,
Եւ խուզարկութեան շղթաներից մի օր դո՛նէ
Զտաս ազատ. . . որ նա ածէ զուրն 'ի կատար։

Սիրո՛ւն պօէտ, օրհնեա՛լ պօէտ, այդ ի՞նչ հուր է
Սրտիդ հնոցում. որ մշտապէս քեզ կայրէ,
Երբ որ կըզդաս մէկ աղքատի դառն դրութիւն,
Արդեօք քո գրի՞չ չէ մի՞ջնորդում օգնութի՞ւն։

Որքա՞ն գնտակ, որքա՞ն նետեր չէ արձակում
Ժլատ կծծի ունևորին քո սուր գրիչ,
Կամ անցաւոր կենաց վախճան գծագրում
Չէ մի՞թէ. և նոցա համար դոլով մեկնի՛չ։

Ո՞չ ապաքէն նախնի դարուց և յիշատակ
Յիշել կտաս նրբաղնեին խորհուրդներով.
Մինչև անդամ անշունչ իրաց բաղմաքատակ (1)
Ճառես ներբող, շնորհես լեզու շատ երգերով։

Պօէ՛տ, օրհնեա՛լ լենի միտքդ, կեա՛նքդ նոյնպէս,
Խիղճդ մաքուր, սիրտդ առողջ արդարապէս
Որ կարենաս խորհել գրել միշտ անաչառ
Զրպարտողին և զրպարտուածին դատ արդար։

Քաղցր է սրտիս, աղնի՛ւ պօէտ, զգացմունքդ,
Երդդ անուշ և սիրելի համոզմունքդ,
Որով կամիս շինել մարդուն բարոյական,
Յորինելով և առակներ խրատական։

Ի Շամախի 1869 ամի։

(1) բաղմաձև, շատ օրինակով։

ԵՐԳ

„Եկ Տէր Յիսուս, այլ արա մեզ.“ երգի եղանակով:

Յորժամ դայցէ Տէրն երկնի
Բաղում փառօք իւր հայրենի,
Զի՞նչ արդեօք զի՞նչ պատասխանի
Տայուք նմա յայն ատենի:

Որպէս արև անդ լուսաւոր
Կըլնին արդարք միշտ փառաւոր,
Իւրեանց քանքար արդիւնաւոր
Պտուղ տուած հարիւրաւոր:

Վառ լապտերով Փեսայի հետ
Հարսանեաց մէջ յերկնային տան,
Փառքով պատուով հրեշտակաց հետ
Կօրհնեն Նորան միշտ յաւիտեան:

Հապա մի՞թէ մենք կարողենք
Այն հարսանեաց արժանանալ,
Կամ այն փառքով ուրախանալ,
Երբ լապտերում վառ ձէթ չունինք:

Ա՞խ շատ դժուար կանցնի մեր օր,
Երբ կփակուին մեզ դռները,
Անդ խաւարում մեր կեանք մեր օր,
Մեզի կըլան մեր աչքերը:

Ներկլ զթալ չկայ յայնժամ,
Բանալ չկայ դուռն անդամ,
Մեզ օրինակ Հայր Աբրահամ. . .
Տես ի՞նչ կասէ այն մեծատան. . . .

Ներկլ խղճալ այս աշխարհում
Պէտք է լինի միշտ մեզ համար,
Սիրկլ եղբօր այս աշխարհում
Լինկլ զթած և բարերար:

Է՞ արդեօք է՞ ուրիշ Աստուած,
Որոյ անունն լինի ահ՞ր,
Կամ Նորան պէս միշտ ողորմած,
Որ նա ինքն է Հայր մեր և Տէր:

Սէրն Յիսուս այո՛ պատուէր—
Նոր պատուիրան տուեց մեզ սէր,
Սիրկլ Աստուծոյն և մեր ընկեր,
Որով լինկլ և բարեբեր:
Ի Շամախի 1867 ամի:

ՆՈՐ ՏԱՐԻ

Ո՛վ նոր կաղանդ, նո՛ր տարի,
Քո գալը մեզ շատ բարի,
Դու հիւր քաղցրիկ գովանի,
Եւ մեր կենաց պիտանի։

Արդեօք դու ի՞նչ լուր բարի
Մեզ քո գալով կաւետես,
Կամ յաջողակ այս անգամ
Քո ընթացքը կաւարտե՞ս։

Քո շրջանը անաչառ
Կգլորես անդադար,
Գիտեմ սիրոյ պտուղներ,
Քեզնով կառնուն շատ սրտեր։

Թո՛ղ զարգանայ հայ մանկտին
Յիւր դեռաբոյս հասակին,
Քո ողջունով թո՛ղ բերկրին,
Զի մինչ տարի թշնամին։

Քո անունը ուկետառ
Գրել սիրեն իսկ յօժար,
Եթէ սիրես սրտով արդար
Լինիլ նորանց բարերար։

Թո՛ղ նորոգվի հայ մանկտին
Իւր խեղճ ցնցոտի կերպից.
Որպէս դառնիք ի հօտին
Կաթն ծծեն մօր ամբիծ։

Մինչև լսէ Հովուապետ
Բարձր սարի գագաթէն.
Սուրբ զգացմունք օգտաւէտ
Յայտնէ ապա իւր սրտէն։

Նա կսպասէ համբաւի
Այս դառանցը աձելոյն,
Ո՛չ խնայէ, զոր ունի,
Յարդ ընծայել սիրելոյն։

Երբ կլսէ նա այս լուր—
Թէ դառնիքը ցնծալով
Արօտ կերթան դաշտ բլուր
Եւ անարկիւղ խայտալով։

Գիտեմ անշուշտ, բնաւին
Դարձեալ պսակ կշնէ,
Այս հաճբաւը տանողին
Շուտ 'ի գլուխ կդնէ։

Ուրեմն դու քո գարուն
Առատօրէն թող լնի,
Դոցա համար միշտ սիրուն
Անդ ու արօտ լի ու լի։

Սիրոյ շղթայն շուտ աւանդ
Տուր մեր Աղդին վշտալի,
Որ նա լինի շարաւանդ(1)
Սրտէ 'ի սիրտ յուսալի։

'Ի Շամախի 1868 ամի։

(1) կապ

ԵՐԿՍԱՅՐԻ ՍՈՒՐԻՑ՝ ԼԵԶՈՒՆ ԱԻԵԼԻ՝ ՎԱՏ Լ։

Ոսկիբերան։

Ոմն ունէր լեզու սովոր չարութեան,
Միշտ կանարդէր պախարակէր բարութեան,
Եւ պարծեցած իրա թունաւոր լեզուաւ
Նորա համար երկիւղ ամէթ չկար բնաւ

Նորա աչքին երևումէր ողջ լիմար,
Զէր ճանաչում մեծ, փոքր և բարերար.
Իրան միայն խելօք գիտուն կարծելով
Ծաղր կանէր ամենքերին լքաբար։

Նորան տեսնող ճանաչողն կիմանայր,
Թէ նա ունի անպուռն բերան խիստ չար,
Զգուշութեամբ նորանից կ'հեռանայր,
Որ մի' գուցէ խոցուի իւր սիրտ չարաչար։

Իրրև վայրի խոզ անտառի սուր թրով
Գիշատումէր պատառումէր իւր լեզուով
Ընկեր, եղբօր, թէ հօր թէ մօր ձաղրելով
Անպատվումէր ում և ինչ ասելով։

Այնքան կոպիտ հաստ բնութիւն նա ունէր,
Բարին ատած չարութեան հետ սէր ունէր,
Որքան քարոզ որքան խրատ թէ լինէր,
Կարծեմ նորան ամենևին օգուտ չէր։

Նորա լեզուն խիստ կատաղի որպէս ձի,
Ունէր բնաւ երասանակ և ո՛չ մի.
Որին թէ և քսան պարան խակ լինէր,
Կապել սանձել կարծեմ դժուար կլինէր։

Որքան լինի շատ ջուր օձառ հնդիկին,
Ձեն կարենալ սպիտակ անել այն սևին,
Այնպէս ևս դժուարին էր նոյն խևին
Խելօքացնել, թէ և հազար մարդ լինին։

Էլ ի՞նչ պէտք էր քարոզ խրատ տալ խոզին,
Որ չգիտէ թէ ոչինչ է թէ անզին.
Հարկաւոր չէր տալ մարգարիտ էնպիսին,
Որ խոզութեամբ առնէր կոխան իւր ոտին։

Ո՛չ ժիմար էր, ո՛չ տխմար էր, ո՛չ գիտուն,
Ո՛չ համեստ էր, ո՛չ բարի էր, ո՛չ սիրուն.
Ո՛չ խոհեմ էր, ո՛չ գգաստ էր, ո՛չ արթուն,
Բայց վարվումէր ինչպէս գազան պատառուն։

Ո՛չ վարք ունէր, ո՛չ բարք սիրոյ քաղցրութեան,
Ո՛չ դիտութիւն, և ո՛չ շնորհք մարդկութեան.
Ո՛չ հեղութիւն, ո՛չ գործ արդար բարութեան,
Սակայն լի էր շատ նախանձու չարութեան։

Ո՛չ միտք բարի կար նորա մէջ բնաւին,
Ո՛չ բան ուղղոյդ ո՛չ խոշմանք ժիւր սրտին,
Ո՛չ շահ օգուտ ո՛չ արդար տուրք աղքատին
Տալ չէր յօժար, նա սիրող էր միշտ չարին։

Չկար բնաւ նորա միջում սուրբ հոգի,
Ո՛չ բարութիւն ո՛չ սէրութիւն ընկերի,
Սրտի մէջն լի պառնութիւն էր մաղձի,
Եւ գարշելի նախանձ բնութիւն խակ յայտնի։

Թէ ցանկայիր բան հարցանել նորանից,
Մաքուր սուրբ բան չէիր լսել բերանից,
Զարմանք է թէ նա ծնուելէ ի՞նչ սեռից
Չեմ իմանում թէ հրէշից թէ մարդից։

Շատ պարծեցած իւր սնոտի փառքովն,
Պարծենումէր իւր ամբարիշտ վարքովն,
Հնց գիտենաս իրա բռնած գործովն
Չէ մեռնելու նոյն աղտեղի բարքովն։

Միշտ լինելով բարի գործոց հակառակ,
Խիստ վարվումէր նա մանաւանդ շատ ներհակ.
Յանդուգն, լերբ, ապարասան, ստահակ,
Մեծաց փոքունց անարգումէր համարձակ։

Ընդունելով միշտ խոր գուբեր էր փորում,
Ընկեր եղբօր որոգայթներ պատրաստում,
Ջանահնար եղած շատին մէջն էր ձգում,
Ոմանց պատուից ոմանց կեանքից էր զրկում։

Ամենևին իրա միտքն չէր ձգում
Վերջին օրը դառն մահը այս կեանքում,
Եւ այն գուբն, որ ընկերին էր փորում
Իրա համար բնաւ ինքն չէր կարծում։

Աւաղ, ավսո՜ս, այն խղճալին իւր գործով
Անդարձ անդեղջ ոչնչացաւ փքալով,
Իւր չարիքն իրա գլխին կուտուելով
Վրէժխնդիր դարձան նորան չներելով։
Ի Շամախի 1865 ամի։

ԽԱԲՈՒԱԾ ՅՈՅՍ։

Յափշտակուած մինչդեռ բորբոք եռանդով,
Վառ իմ կուրծքը իբրև արի կուռ զէնքով,
Մաքառէի կրքերի դէմ, որք փութով
Կամեցան ինձ առնել որսորդ քաջ կորով։

Ես որ բնաւ տեղեակ չէի որսերի,
Յանկարծ տեսի առջևս բացված թաւ մերի(1)
Նետ իմ ձեռին վառված սիրով որսական,
Որոնումեմ դաշտ–ձորեր թափառական։

Ո՞վ արդեօք ո՞վ կարէր ելնել իմ առաջ
Թէ կատաղի թէ քանասար գայլ և ա՞րջ,
Եւ յանդգնիլ դիմադրաւ ինձ լինիլ,
Կամ դիմանալ կարե՞ն արդեօք նետիս քաջ։

Սարեր, ձորեր, դաշտ, հովիտներ անհամար
Աչքիս առջև երևեցան հաւասար,
Թէ ապառաժ թէ կողմ ժայռոտ ինձ համար
Զզգայի ես իմ քայլերին այդ դժուար։

(1) գալին անտառ, ծմակ։

Թեւակոխեալ սուղ միջոցում վաղվաղկոտ
Կոխան առի ձորեր լեռներ խիստ ծաղկոտ,
Իմ ըղձալին իմ կորուստը ափսո՜ս որ . . . .
Չէ՛ր տեսանվում և չէր բուրում որսի հոտ:

Զնաշխարհիկ չքնաղ իմ որս Թանկագին
Կարծես կամէր Թողուլ իմ աչք լալագին.
Կամ ժանտ ուտիճ պիտի նստէր իմ նեռին,
Հալել մաշել ծարաւ սլաք սուր սայրին.

Այնքան վառ էր հուր հնոցի իմ սրտին,
Մինչ փաղարեան ցլոյ մէջ զիս կարծեցի.
Տրուի սրտիս յաջ և ահեակ Թնդագին,
Շռինդ, վրդով, աղմուկ շտապ յարուցին:

Բայց դեռ աղնիւ յոյսը բնաւ իւր կապից
Չէր իսկ լուծեալ, այլ անվհատ կսպասէր,
Որ յետ առաջ պիտի ստանայր նորանից-
Իւր պսակը իւր փափագը այն որսից:

Անանդորր ձիդն տուի իմ քայլին.
Անթարթ նայել ես վճռեցի իմ աչքին,
Եւ խուզարկու արագութիւն իմ մտքին,
Այս նպատակ որոշեցի ըստ կարգին:

Մինչդեռ այսպէս շուար երեր ծփանքում,
Աննիւթ մարդը սրտիս խորքումն էր տատանվում.
Յանկարծ գտի զիս մէկ գաշտում ծաղկազարդ,
Որն իմ ընդ մէջ հանդիսացած գնտին զարդ:

Ո՛վ բնութիւն ի՞նչ խրախոյս դու ինձ տաս,
Երկու եղերք շուտ առջևս փակելով-
Կամ առաջնով մրցանակաւ սիրտ յո՞յս տաս,
Կամ երկրորդով զուր ջան վատակ իմ զգաս:

—Դէհ վաղ ընդ փոյթ ձգի՛ր ձգի՛ր պատանի՛
Քո սուր նետը, ահա՛ որսը գովանի,
Կամ բե՛ր շուտով սուր սլաքէն անկանի,
Կամ թող խոպառ աղնիւ յոյսդ հատանի:

Արտասանած ,, ո՛վ Արարիչ զօրութեան ''
Սկսայ զլել լարս ուժգին ադեղան.
Ո՛վ նպատակ ծաղկիլ կամիմ քեզ միայն,
Արձակելով արդէն նետս որսական:

Սակայն դժխեմ բախտը զանխուլ դարանի
Նիւթել էր ինձ յաչագկոտ միտք գաղտագողի,
Մինչ կամէի ո՜հ ժամանել կեդրոնի,
Ամրեց կորուստ իմ եռանդեան կենդանի:

Ի Շամախի 1867 ամի:

ՎԻՃԱԿ ԴԱՌՆԱՇԽԱՏԻՆ·

Դառնաշխատի ճակատից
Ջէր պակասում իւր քիրտն,
Շատ դառնալի հոգսերից
Ջէր ձանձրանում իւր սիրտն։

Ունէր նա իւր ամուսին
Մէկ աղքատիկ խրճիթում,
Ոչքա սիրով միասին
Ապրում էին այն տեղում։

Յերեկը նա դաշտերում
Անհանգիստ էր վաստակում,
Ուռն բահը իւր ձեռում
Խիստ կոշտ երկիրն էր փորում։

Այն էր աղքատին ջանքը,
Որ կարենար վաստակով
Իւր օրական պարէնը
Գէ՛թ ձեռք բերել քրտինքով։

Թէ ցուրտ և թէ տաք օրում,
Թէ հարթ և թէ ձոր տեղում,
Եւ թէ քարաժայռ կողմերում,
Աշխատումէր մեծ ջանքով։

Մի երիկոյ անձնով յոգնած
Դարձաւ հեռի դաշտիցը,
Նա խիստ տխուր վշտացած
Ողջոյն հանեց բերնիցը։

Տուեց կինը պատասխան—
„Ինչո՞ւ ես այդպէս տրտում,
Ո՛վ իմ միայն պատուական,
Ի՞նչ ես սիրտս մորմոքում։“

„Ինչ ես խորհում դու այդպէս
Մեր վիճակին դառնապէս,
Ունինք մեզ Ստեղծող Աստուած,
Նա չի առնել մեզ անտես։“

„Եկ դու նստի՛ր դաղարի՛ր,
Այսօրվայ դործի՛ցդ պատմիր,
Շատ հոգալով դու այդպէս,
Ի զուր տեղից մի՛ տրտմիր։“

–,, Ի՞նչ անեմ ինչ սիրուհի՛,
Կեանքս հոգիս մաշվումէ,
Միշտ դաշտումը միայնակ
Տանջվում եմ անօգնական։ ,,

–,, Այսքան տարի միասին.
Ո՛վ իմ սիրուն ամուսին,
Ի՞նչ օգուտ է մեր վաստակ,
Առանց որդւոյ և մեր կեանք։,,

–,,Ես դաշտումը տխրալի,
Դու այս տանը խղճալի
Ա՛խ, մինչև ե՞րբ մեր կեանքը
Պիտի անցնին տրտմալի,

,։Ո՛վ սիրելի յարգելի
Ունինք մեղի ապաստան
Աստուածն մեր պաշտելի,
Նա զթած է յաւիտեան։

,,Նա կարող է քարերից
Յարուցանել զաւակներ,
Ե՛կ դու խօսիր Սարբայից,
Որին արաւ բարիքեր։ ,,

–,,Ես չեմ կորում իմ յոյսը
Մեր ողորմած տէրից,
Որին ծնաւ սուրբ կոյսը,
Նա կծագէ իւր լոյսը։

–,,Ե՛կ միասին սուրբ տէրից
Խնդրինք, որ մեզ ողորմի,
Նա չի պակսիլ իւր փառքից,
Պարգևելով մեզ որդի։,,

–,,Ես անդումը դու տանը,
Որով կը ընինք միշտ ուրախ,
Թէ դաշտումը թէ տանը
Կանցնին մեր կեանքը ուրախ։,,

Նոքա այսպէս խօսէին,
Մխիթանց սիրտը շահէին.
Իւրեանց աղքատ խրճիթը
Ամենից լաւ կարծէին։

Երկար չանցաւ կատարվեց
Իւրեանց սրտի փափաղը.
Աստուած նորանց պարգևեց,
Սիրուն քնքուշ որդեակը։

Ց. Խ. Ք. Մ. Պ ա ք ա ի զ է կ

Դառն ծնողաց վիճակը
Փոխվեց արդէն ցնծութիւն,
Նոցա ծանր վաստակը
Թուվեց իրանց քաղցրութիւն։

Օր ըստ օրէ աճումէր
Դառնաշխատի մանուկը,
Որի դէմքումփայլումէր
Խիստ գրաւող եռանդը։

Հապա ասաց Ռամիկը
Իւր սիրուհի կնոջը,
„Արդ կբացուի մեր բախտը,
Եւ կբուժվի մեր ախտը։“

„Պատճառ, հանաւ մեր որդին,
Որ կհանէ մեր հովին,
Այսուհետև ո՛չ մի բան
Չէ չհանիլ մեր բախտին։“

Ո՜հ, սնոտի կարծիքը
Ինչ երևակայութեամբ
Խաբեց նոցա շուտ միտքը
Անցաւ որ երջանկութեամբ։

Չկարծեցին բնաւին,
Թէ ծովն ունի թշնամին,
Բնական է այս ոսոխ,
Հասարակաց և շատ հին։

Սրվեց շուտով մանդաղը
Մատաղ մանկան մահուանը,
Որով խլուեց այս կեանքից
Սիրուն մանկան մարմինը։

Դեռ չէ բացուած թառամած
Իւր ծնողաց առաջին,
Իբրև ծաղիկ թարշամած
Դրվումէ հողի միջին։

Դէ՜հ հարցրո՛ւ վիճակիցը—
Դառնաշխատի կեանքիցը,
Իւր վշտալի կնոջ հետ
Զեն դադարում լացիցը։

Նոցա անցեալ վիճակին
Կասեն բաղումք երանին,
Դեռ որ նոքա չունէին
Այն տրտմաւէթ մէկ որդին։

Թէ ոք կամի մնռենալ
Այն խրձթի դռնիցը,
Արդեօք կարէ՞ նա չզգալ
Նոցա դառն կսկիծը։

Ո՛վ խիստ դառն դու աշխարհ,
Իրաւ սուգ ես ծո՛վ աշխարհ,
Եթէ բառնամ հ ո ն քեզնից,
Պէտք է դառնաս ո ղ բ ա շ խ ա ր։

Ի Շամախի 1866ամի։

ՏԽՈՒՐ ԶԳԱՅՄՈՒՆՔ,

Որպէս արտուտ յեթերս ճախրէ,
Զսիւն ըղձիս որով փխրէ,
Զգեալ ձեռն իմ ո՛չ ժամանի,
Ուստի սիրտ իմ միշտ տխուր է։

Յառեմ դաշտս առ նա տխուր։
Սիրտ իմ վառի որպէս պՀուր,
Զի՛ք, որ տայ զողջոյն ,,թէ լո՛ւր
Խղճո՛ւկ, ահա քեզ սառն ջուր։''

Այլ միշտ բօթոյ զգամ զձայն
Ի խորշ սրտիս, որ տայ զվա՛յն—
,, Թէ գքեզ ոչ ոք, բայց նա միայն
Կարէր սփոփել հերոսն այն...''

Մերթ քստմնատիուշ լինիմ յապուշ,
Մերթ ի շուար և խռովեալ,
Մերթ կորնչի լինէն իմ ուշ
Ի խորս սրտիս խորասուզեալ։

Մերթ նուաղեալ սիրտս զգայուն
Զլինքևամբ ձգէ քօղ սգալի,
Որով խորհեալ խորհուրդ անհուն
Հանէ թառաչս վշտալի։
Ի Շամախի 1868 մի։

Ողբալից բանք սուրբ Աստուածածնի վանից
Մեյսարու, որ ի վիճակին Շամախւոյ։

Ո՛վ Հայ պատանի, քո գալուստ բարի
Այս սուրբ մենաստան, որ ի Մեյսարի,
Ա՛րդեօք, կբերե՞ս ինձ մի լուր բարի.
Թէ անձար անտէր դեռ լամ շատ տարի,
Իբրև զգերի։

Գիտեմ որդեա՛կս, կ՚զգաս և դու
Մորմոքը սրտիս, թառաչս անձայն.
Եւ մինչև անգամ եղերերգու բու
Կտեսնես գլխոյս, որ կձայնէ վա՜յ...
Առաքինի Հայ...
Զունիմ պաշտպաններ–նախնի սուրբ Հայրեր,
Վաղեմի գթած առատ իշխաններ,
Որոնք մեծ յուսով ձիրն ու գանձեր,
Զոհել են ինձ միշտ արժանի զոհեր,
Տրովք բարեբեր:
Յայնժամ ծնկաչոք դասք ուխտաւորաց
Առատ պարգևօք էին սրտաբաց,
Բայց արդ իմ աչաց կաթիլք արտասուաց
Կառնեն իմ տխուր սուրբ յատակս թաց,
Տամուկ տրտմագգեաց:
Ո՞ւր են իմ զարդեր կարմիր ծիրանի,
Ո՞ւր թագք մարգարտեայ, զգեստք բեհեզեայ,
Որով օրհնութիւնք աղօթք գովանի
Լինէին անհատ հանապազորդեայ,
Սիրով մշտակայ:
Ո՞ւր են խնկատուփ, բուրվառս աղօթից,
Ո՞ւր սուրբ ալելուք, դասք միաբանից,
Դոցա փոխարէն չդջիկք դարշելի
Արդ սուրբ պատերիս վերայ լինեն լի,
Ձևով ահռելի:

Ո՞ւր են իմ արօրք, ո՞ւր քաջ մշակներ,
Որք մշակէին բեղմնաւոր սերմեր.
Ո՞ւր արտորայքս, ո՞ւր իմ ճոխ հունձեր,
Որոնք տային ինձ գեղեցիկ խուրձեր,
Յաճախ պտղաբեր:
Ո՞ւր են անդէպս, պտղաւէտ այգի՞ս,
Ո՞ւր են լուծք եզանց, ո՞ւր և նժոյգ ձիս,
Որք ծնանելով մի ուրախ կեանք յիս,
Առիթ բերկրութեան ձօնէին սրտիս,
Տալով զբարիս:
Ո՞ւր է սառնորակ և ակնակիտ
Գեղեցկայարմար աղբիւրս վճիտ,
Ո՞ւր շատրուանս միշտ կարկաչատահ,
Երբ զիմ գիկանս կարծէի անմահ,
Թշնամուց անահ,
Դու ատ կանգնես սրբազան Հարանց
Միայն յիշատակ փոշեաւ հնացած,
Որք թողեալ անտէր զիս 'ի սուգ 'ի լաց,
Փոխեցան յերկինս–'ի կեանս անանց,
Յօթևանս իւրեանց:
Երկար պատմելով քեզ իմ թախիծը,
Դեռ շատանում է սրտիս կսկիծը.
Գնա՛ ընթացի՛ր դու դէպի յառաջ
Արագ քայլերով զառ 'ի վայր վաղ քաջ
Գեղոյն ընդառաջ:

Գնա՛ պատանի՛, դու Հայ պատանի,
Այդ ճանապարհաւ, ուր քեզ կոչանի,
Անդ քո առաջև նորան կտեսնես,
Որ զիս կողբայ միշտ ցաւերով պէսպէս,
Իսպառ դառնապէս,
'Ի Մէյսարի 1868 ամի,

ԼՈՒԱԻՆ.

Նուէր Պարոն Յ. Գեօկչայեանցին (1) 'Ի Շամախի.
Ըստ եղանակի ,,Այգանայ ահա՛, այգացաւ ահա՛'' երգոյն:

Ո՛վ լուսին լուսին, սիրո՛ւն առարկայ,
Դու պայծառ վարոս երկնային վկայ.
Լուսատու ճրագ և զարդ գիշերվայ,
Եւ մեր գործերին վկայ ես վկայ:

Քեզ միշտ տեսնելիս արդեօք պանդուխտը
Զէ՞ մտաբերում իւր սրտի ուխտը,
Որ արելէ նա իւր հայրենիքում
Քո պարզ լուսի տակ իւր սրտի խորքում:

Այս երգը գրուած է յիշեալ Պարոնի եղբօր Մարտիրոս բէգի սպանման պատճառով հետև եալ թուականում:

Զէ՞ յիշում արդեօք իւր սիրականին,
Որին թողելէ հեռաւոր տեղում,
Զէ՞ յիշում արդեօք աչքը լալագին.
Քաղցր խօսքերը, սէրը թանկագին:

Զէ՞ յիշում արդեօք մօրը կաթոգին,
Հօր երախտիքը, սէր եղբարց անգին,
Սէր ընկերակցաց և սէր հայրենեաց,
Որոնցից զրկուած մնայ տխրագին:

Քեզանով լուսի՛ն, սիրելի՛ լուսի՛ն,
Բացումէ իւր սիրտ պանդուխտը թշուառ,
Ի՞նչ է տեսանում—ցաւ եր նոր ու հին,
Որոնց անկասկած վկայ ես վկայ:

Քեզանով լուսի՛ն, սարեր ու դաշտեր,
Զորեր հովիտներ, լճեր ու ծովեր
Փայլումեն պայծառ արծաթեայ ջրով,
Սակայն պանդուխտը յայտնումէ վշտեր:

Քեզանով լուսի՛ն, մանիշակն հոտում,
Զուարթանումէ թփերի տակում,
Վարդը Մայիսվայ պարտիզն մէջում,
Քեզնո՛վ է ուրախ կենդանի մնում:

Աչքը դէպի քեզ, ո՛վ լուսին պայծառ,
Երգումէ պանդուխտը սրտով սիրավառ,
Երբեմն անձայն յոգւոց հանելով
Վառվումէ զգացմունքով անդադար։

Վա՜յ ես վկայ և աղօթիկերին,
Որ քո լուսի տակ ջոքած կամ կանգնած
Փառաւորումէ իրա Արարչին,
Նորա զօրութեան վերայ զարմացած։

Քեզ որբ և այրին տեսնելիս անգամ
Նոր նորոգվումեն ցաւով սրտմաշկից,
Քո լուսով իրանց վիճակին տարտամ
Վա՜յ են կանչում քեզ վկայ բարձրից։

Միակերպ լուսով թշնամու սուրը
Եւ սպանուածի անմեղ արիւնը
Լուսաւորումես, և այն ժամետ թուրը . . .
Որոյ հարուածին վկա՛յ ես վկայ։
'Ի Բազու. 22 յուլիսի 1872 ամի։

Պատասխանի ,, Տեսլեան,, Սեբաստի Շամախեցւոց (Կապիտան Պետրոսի Տէր Յովսէփեան Մատաթեանց) (1)

Ամէն երազ թէ համարենք տեսիլ արդար,
Էլ մեր ցաւին ի՞նչ օգուտ են բժիշկ և ճար,
Շատ այդպիսի նուէտ տեսիլներ պատահումեն
Ճնճղուկներին, և կամ նորանց, որք են անճար։

---

(1) Տեսիլքի բովանդակութիւնը այն էր, որպէս թէ Օրֆէն և Մորֆէն (երգի և քնի չաստուածները) քաղցր քուն են պատճառում Հայաստանում Սեբաստին, որ և տեսնումէ երազում մի ծեր մարդի նմանացնելով կամ Հայկին կամ սուրբ Գրիգորին, որ խորհուրդ է տալիս իրան թէ ինքն Սեբաստը յայտնէ Հայոց Ազգին, որ Յունաց հետ հարազատ և մի լինին կրօնքով։ Այս տեսիլը գրումէ Սեբաստը Շամախում 1867 թուականում հետևեալ դէպքից յետոյ։–

Մի անգամ Շամախում մի երևելի պատուանուն քաղաքացու տան հացկերութի ժամանակ բանակռիւ է մնանում ինքն Սեբաստը տեղւոյն հանգուցեալ Առաջնորդ Դանիէլ Սրբազանի հետ. վէճը հասնումէ այն աստիճանին, որ Սեբաստը վառուած և շարժուած կրքով, վշտացած և խռովված հոգւով հեռանումէ սեղանից և տանից։

Մի քանի օրից յետոյ պարզ երևումէ, որ Սեբաստը

Ծարաւ մարդին վերմակի տակ մութ գիշեր
Երևումեն սիրուն ծաղկունք, դաշտ, հովիտներ,
Պարզ, սառնորակ և քաղցրահամ աղբիւրներ,
Որք չեն կարում զովացնել այրած սրտեր։

այլ ևս չէ՛ կամենում յարակցութիւն ունենալ տեղւոյն տղայոց ուսումնարանի հետ իւր Հոգաբարձական պաշտօնովը. նա տալիսէ հրաժարական թուղթ և արձակվում։ Յետոյ դիմումէ խնդրագրով Թիֆլիս՝ պատկանած տեղւոյն, որպէս զի ընդունեն իրան վերոյիշեալ կրօնքի մէջ։ Ընդունվումէ։ Սորանից յետոյ նա կորցրեց Հայաստանում իւր Ազգի մէջ գրականութեամբ և բանաստեղծի անուամբ ձեռք բերած համակրութիւնը և նշանակութիւնը։ Խղճալին չհասնելով իւր նպատակին, խաբուած տեսնելով զինքն իւր երազով, մանաւանդ իւր հասակի վերջին տարիներում, կորազրուխ թողեց հայրենիքը. գնաց ընտանիքով Երուսաղէմ յուխտ 1868 թուականում։ Այն տեղից վերադառնալով մնաց Կ. Պոլսում այն նպատակաւ, որ գտնէ այնտեղ կարողանայ կրկին ձեռք բերել մեր Ազգայիններից իւր կորցրած սէրը և յարգանքը, որ կային դէպի ինքն յառաջքան կրօնափոխ լինելը։ Թէ և նա Տաճկաստանցի մեր Հայ եղբայրներից կարաց փոքր ի շատէ համակրութիւն ստանալ, սակայն, Ռուսաստանի Հայերի մէջ թողեց նոյն նշանակութիւնը նոյն տպաւորութիւնը, որ ցոյց էր տուել իւր կրօնափոխ լինելովը։ Նա վերջապէս երկար չապրեց. նա չհասած իւր նպատակին 62 ամեայ հասակում 1872 թ. մեռաւ Կ. Պոլսում, ուր և թաղվեցաւ փառաւոր հանդիսով Հայոց եկեղեցւոյ կանոնով, Հայ եկեղեցականների ձեռքով. ինչպէս ինքն ցանկացել է և խնդրել հիւանդ ժամանակին։ Տեղւոյն Հայոց Պատրիարքը պատուել է հանդուցելուն իւր խոսած սրտառուչ դամբանականովը։

Ով ցերեկը փառքի պատուի կարօտումէ,
Գիշերը նա երազներով շուտ գտնումէ,
Երբ որ քնից ուրախ ուրախ զարթնանումէ,
Իսկոյն իրան ունայն թափուր տեսանումէ։

Քեզպէս շատին հենց այդպիսի երազները
Շուտ խաբելեն ածիլելով գլխի հերը.
Թողել են միշտ թափառական աստանդական,
Որ չէ գտել երազով էլ հերն ու մերը։

Է՛կ դու Սէյֆատ, ճշմարիտը խոստովանի՛ր,
Քեզնում խիղճը չէ՛ անդորր, մի՛ սպանիր.
Այն տեսիլը Հայաստանում որ դու տեսիր,
Ճիշդ խօլական ցնորմունքներ է՛կ համարի՛ր։

Այդ տեսիլը փառքի տեղակ կտայ ՁԼաս,
Ինչպէս ոմանց հասցրել են և ո՛չ պակաս,
Է՞ր փոխեցիր հասունացած պտուղներդ,
Նոցա տեղը առեր մաղձոտ շլոր տհաս։

Եղովբոսի էշն էլ տեսաւ իւր տիրոջ շան,
Որ քծնելով ստանում էր ուտելու բան,
Ասաց ես էլ խաղամ ոտներովս իմ տիրոջ հետ
Որ նորանից և ես ստանամ ինձ հաճոյ բան։

Ի՞նչ ստացաւ արկեօք էշն— այն խեղճ անբան.
Գարշոյ տեղակ—մահակ և թակ խիստ անպիտան;
Այն չէր կարծում, որ յոյս ունէր ստանալու
Ոչ թէ նախատ, ո՛չ թէ մախաթ, այլ և դարման։

Ափսոս մէկ էլ որ չես տեսնել այն տեսիլը.
Որ ճանաչես քեզ որդեզիր բռնող ծերը.
Ապա նորա աչն ու ոտը պագանելով
Յայտնէիր նորան քեզ տուած օգուտները։

Խնդրի՛ր կրկին քո ՕրՁէին և ՄորՁէին,
Որ քեզ մէկ էլ արժանացնեն 'ի տես ծերին,
Նորան պատմես Հայոց ազգի պատասխանին—
Թէ լաւ գիտենք Հայկ ու Գրիգոր սուրբ ծերունին։

Ասա ծերին թէ Հայք են միշտ հաւատարիմ
Թէ օտարի իշխանութեան և թէ շահին.
Նոքա յօգուտ միշտ իւրեանց օտար իշխանին
Զոհել են Հային, տուել են հարազատին։

Թո՛ղ ասածիս քո խօսքերը վկայ լինին—
„Թէ Հայք միայն տէր չե՛ն լինում իւրեանց Հային,“
Եւ ապացոյց զորան պատմութիւնն նոր ու հին—
„Թէ մինն էր սիրում իւրեանց հիւանդ ոչխարին.“

Ասա նորան, թէ մենք չունինք ուրիշ վահան,
Խաչն է միայն մեզ ապաւէն յոյս փրկութեան.
Որի վերայ տարածեցաւ ձեռն ցերունեան,
Բա՛ւ է նա մեզ յերկինս յերկրի միշտ յաւիտեան։

'Ի Շամախի 1868 ամի։

Շ Ա Մ Ա Խ Ի Ն·

Պատասխանի նամակին Պ· Յարութիւնի Ալիքսանդրեանց· որ կոչի մայիսի-կոյր·

Ի Լ ա ն ք ա ր ա ն·

Շամախին էլ մի քաղաք էր պատուական,
Գեղեցկադիր և ամենին դուրեկան,
Սակայն շուտով իւր փառքիցը ամենայն
Զրկուեց շարժով, մնաց անշուք և ունայն,

Ասումէք թէ ,,Դորա բնակիչք մեղք ունին..''
Թէ մեղքիցն է, կարծեմ այլոցն անթիւ լինին·
Ապա ի՞նչ է — ներքին դաղ է հրային,
Այո՛ այդպէս, թո՛ղ Աստուծոյն կամք լինին·

Միայն եղբայր, քեզ կարողեմ այս ասել—
Թէ Շամախին թառամել է սկսել·
Իւր դարունը փոխելով խիստ վատ ձմեռ,
Տեղւոյ բնակչաց արել է արդ կիսամեռ·

Զունի արդէն իւր գեղեցիկ տուները·
Հիմքից շարժուած կոտրատված են սիւները,
Վաղ են պակսել հարուստ առատ իշխանները·
Սուգ են մնել երիտասարք և ծերերը·

Մաքուր յատակ փողոցները սե՛ս արդէն
Լիքն են հողով, քարակոյտով շատ կողմէն,
Թէ հարցանես առողջութիւն դու մէկէն,
Ա՜խ, ո՜հ, թառաչ կլսես շատ բերանէն·

Սուրբ տաճարը. (1) որ տխուր էր Նիվաղոց,
Այժմ իսպառ չէ՛ դադարում շատ լալից·
Զայնում է միշտ թաց աչքերով իւր ողբոց
,, Թէ օգնեցէ՛ք բժշկելով սրախս խոց·

ԳՐԱԴԱՐԱՆ

(1) Յիշեալ տաճարը Շամախւոյ մէջ նորակառոյց եկեղեցին է, որ 26 տարի դորանից առաջ է շինուած· Ամեն մի օտար քաղաքացի ճանապարհորդ յիշեալ տաճարին տեսութիւն գնալիս, յայտնում էր իւր զարմանքը, պատճառ, շատ յարմար էր թէ իւր ձևովը, թէ մեծութեամբ և թէ ներքին պայծառութեամբը· Այդ եկեղեցին շինուած է Շամախեցի պատուանուն քաղաքացի Ներսէսեանց Պետրոս և Մովսէս եղբարց ջանքով և արդիւնքովը, որի վերայ թէ որքան գումար է

Եվ կլման մաքուր օդը կարող չեն
Մխիթարել բնակչաց սիրտը բնաւին,
Սիրուն դաշտեր, ծաղկանց թփեր կարող չեն
Յետ դարձնել կորցրած զարդեր նոր ու հին։

Ունի միայն մէկ առկայծեալ խեղճ ճրագ,
Որոյ անուն „ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ“ կկոչի,
Նա էլ ունի միշտ իւր աչքի մէկը փակ.
Ճիշդ չգիտեմ, կվառուի թէ կհանգչի։

Միով բանիւ թշուառացած Շամախին
Ցաւ է կրում տեսակ տեսակ սաստկագին,
Թէ օտարը նայէ միայն դրսի աչքով,
Նա չէ կարող տեսնել նորա վէրքը սրտին։
Ի Շամախի 1869 ամի։

ծախուել, ճիշդ հաշիւը չգիտեմ։ Դորա շինութեան սկզբումը հիմնադրութեան ծախսին մասնաւոր կերպով օգնել է և Շամախւոյ Հասարակութիւնը, թէ որքան գումարով, այդ էս չգիտեմ։

1872 թուականին յունվարի 16 ին առաւօտեան 10 ժամին պատահած ամենասաստիկ գետնաշարժով Ի Թիւս քաղաքի շատ շինութեանց կործանուեցաւ բոլորովին և այդ ցաւալը։ տես „Մշակ“ լրագրի նոյն թուականի №№ 6. 7. 12.

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Զափաբերական և կամ արձակ թէ Հայկական և թէ Ռուսական շարադրութիւններից։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ։

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ,,ՎԱՐԴ ԴԱՐՆԱՆ ԾԱՂԻԿ'' ԻՆ։

Ո՛վ դու վարդ դարնան ծաղիկ.
Բացուի՛ր հով ստուերի տակ,
Քեզ ապահով հովանիկ
Ունեցի՛ր խիտ թփի տակ։

Միշտ արթուն, քո թշնամուդ
Դու կանխապէս ճանաչի՛ր,
Դէպի քեզ փչած հովից
Իսկոյն դու զգուշացի՛ր։

Կոկոնդ քեզ պահապան,
Յայնժամ է, որ չես բացուած,
Երբ յայտնուեցար, լմա՛,
Զարք կը ընին քեզ պաշարած։

Վախեցի՛ր արեգակից,
Նորա այրող ճառագայթից,
Սիրելի քնքո՛ւշ ծաղիկ.
Քեզ պահի՛ր սուր փշերից։

Այսպէս ահա՛ թիթեռը
Յայտնեց շուտով իմ վարդին,
Պարզապէս և ամենը
Շնչեց բաց ականջին։

Սակայն վարդը չիմացաւ
Այս պարկեշտ սուրբ խորհուրդը,
Նոյնպէս շուտով մոռացաւ
Իւր բարեշուք վիճակը։

Մեղմիկ հովը, որ փչումէ,
Նա իրան շահ կարծումէ,
Որով խաբուած դրաւված,
Բարեկամ ճանաչումէ։

Տալիս է պատասխանի
Վարդն այո՛ գովանի,
,, Թէ նա հենց արեգակն
Է ինձ սովոր ընտանի։''

,, Շողշողուն արեգակը
Սիրումէ ինձ սերտ սիրով,
Իմ կարմրիկ թերթերը
Փայլումեն իւր ծաղկով։''

,, Կարծեմ ինձ որոնելը
Բնաւ պէտք չէ ստուերը,
Ոչ՛ էլ ճնաս կարող են
Տալ ինձ փչող հողմերը։''

Ո՜հ, իմար հպարտութիւն
Տալիս է ինչ զօրութիւն,
Տե՛ս թշուառ ծաղկի մտքում
Ծնանումէ ինչ դատողութիւն։

Տարածեց արեգակը
Իւր այրող ճառագայթը,
Կորացաւ չքնաղ վարդը
Իւր փառաւոր գլխիցը։

Սկսաւ նա թուլանալ,
Իւր գունիցը գալկանալ,
Անուշահոտ թերթերով
Հետ գնեան չորանալ։

Ո՛վ քնքուշ սիրո՛ւն ծաղիկ—
Դու օրիո՛րդ գեղեցիկ,
Քեզ ունեցի՛ր օրինակ
Հպարտ վարդն անուշիկ։

Մի՛ խաբուիր ամեն հողմով
Որ դէպի քեզ փչվումէ,
Գարնան հով խմենալով,
Ներգութիւնով փչվումէ։

Դու եղի՛ր հարազատ մայր,
Մայրական սուրբ սիրով.
Զարգացի՛ր կեանքով արդար
Ունելով գութ և զորով։

Եւ մայրական սուրբ կապով
Շաղկապուի՛ր անքակտելի,
Ժիր, համեստ, արդար բերքով
Ուրախացի՛ր փարելի։

Քեզ անզորր վիճակը՝
Իսկ բախտաւորութիւն է,
Դալկացնող վատ հովը՝
Քեզ կեանքիցդ զրկողէ։

Բուսի՛ր ծաղկի՛ր այն պարտիզում
Ուր ունենաս պարտիզպան,
Հոսդ բուրի՛ր այն տեղում,
Ուր երկիւղ վնաս չկան։

Որոնի՛ր քեզ հովանի,
Ապահով կեանք գովանի,
Այն գետից զգուշացի՛ր,
Որ անմուունչ գնալ ունի։
՝Ի Շամախի 1866 ամի։

ՔՈՒՆ ԵՒ ՄԱՀ։

Փոխադրութիւն Ռուսական արձակ շարադրութենից։

Ընդդրկելով եղբայրաբար գնացին
Դէպի աշխարհ հրեշտակք քնոյ և մահուան.
Եկին հասին՝ ի մի բլուր. ուր հանգեան,՝
Որ էր հեռի բնակութենից մարդկային։

Գրասկասառնեալ նոքա միմեանց սերտ սիրով
Առին հանգիստ, բայց հեղութեամբ և սիրով,
Իբրև հլու պաշտօնեաներ ցեառն հրաման
Պատրաստ էին կատարելու սուրբ սիրով։

Երբ որ հասաւ իրիկունը շուտաքայլ.
Ամենայն տեղ թագաւորեց լռութիւն,
Փչելով մեղմ՝ թուլութեան քամին մութ մռայլ
Ժիր ոսքերին շնորհեց շուտով թուլութիւն։

Այպա ինոյ հրեշտակը վերկացաւ
Շուտ տարածեց քնոյ սերման քաղցր համբաւ,
Երեկոյեան քամին տարաւ մօտեցրեց
Գեղջուկ բնակչաց բընակութեանը մեղմաւ։

Գրկեց նորանց քաղցր քունը թեւերով,
Ընջեցրեց և ծերերին իւրեանց ցպով,
Ամենքերին հետ զհետ գլորեց,
Եւ մանկանցը օրօրոցում հեշտ քնով։

Հիւանդը իւր սաստիկ ցաւը մոռացաւ,
Վիրաւորը իւր կսկիծը դառնագին.
Զքաւորը իւր հոգսերը չիմացաւ,
Վշտացածը իւր վիշտերը սաստկագին։

Գործ դնելով քնոյ հրեշտակն իւր վարձը,
Շուտ կատարեց պարտաւորված իւր գործը,
Նստեց յետոյ իւր սիրելի եղբօր մօտ,
Որից բուրեր խիստ դառնաշունչ մահուան հոտ։

Երբ պարզումէր առաւօտեան արշալոյս,
Կարդաց ուրախ իւր ընկերին բարիլոյս,
Եւ ասաց .. թէ ահա՛ կօրհնեն մարդիկ ինձ,
Որոնց տուի քաղցր քուն և խաղաղ յոյս։

Ո՜հ, ինչպիսի՜ երանական գործեր են
Նոցս համար այն շնորհքը թանկագին,
Զոր ծածկաբար միշտ ընկերին կատարեն—
Միշտ լաւութիւն գործ օգտաւէտ շահագին։

Ո՜հ... ինչ գեղեցիկ երանութեան վիճակում
Վայելումենք համեստաբար այս կոչում,
Նոյնպէս յաւերժ երջանկութեան հրեշտակներ
Անմահ բարի գոյացութեան ենք կոչվում։

Քնոյ հրեշտակն այսպէս խօսեց խնդագին,
Իւր պատուելի եղբօր հետը թանկագին,
Երբ բացումէր արեգակը իւր անգին
Ոսկեայ դուռնը ճառագայթիւք զուարթագին։

Սակայն նայեց մահուան հրեշտակը տխրալի
Եղբօր դէմքին, որ խօսումէր ցնծալի,
Եւ անմռունչ իւր աչքերից գետօրէն
Շատ արտասուք հոսեց տխուր դառնալի։

Սրտի խորքից յոգւոց հանեց սաստկապէս,
Եւ մի թառաչ նորա եռքից դառնապէս.
Ա՜խ, իմ եղբա՛յր .. ասաց մի՞թէ չգիտես
Իմ խիստ ցաւը, զոր ես ունիմ յայտնապէս։

Ինձ կոչումեն աշխարհումը թշնամի,
Սիրող չկայ միանգամայն և ո՛չ մի.
Չկայ մին, որ ուրախ սրտով օրհնէ ինձ,
Գո՛նեա շահէ տխուր սիրտս անգամմի։

Աշխարհումը ինձ թշնամի կարծումեն,
Ուրախութեանց իսկ խանդարիչ կոչումեն,
Որոնց ողջոյն ես տալիս եմ զզվումեն,
Անագորոյն մահ ասելով ատումեն։

Ո՜հ, երանի՜ թէ քեզ նման լինէի,
Խաղաղ կենօք պայծառ դիմաք ցնծայի,
Ա՜խ...այդ դառն պաշտօն ես յանձն չառնէի,
Շուտ դառնացող մարդուն ես մահ չտայի,

Քնոյ հրեշտակն ասաց նորան սիրտ տալով
Ո՛վ իմ եղբայր, մի՛ մտածիր տխրելով,
Մի՞թէ և քեզ բարի մարդիկ յարգելով
Չե՛ն յարգելու և քեզ բարի կոչելով,

Կ՛գան օրեր, կհասնի ժամ նոյնգունակ,
Քեզ կսիրեն և լինելով գոհանակ,
Նոքա նոյնպէս իւրեանց քնից զարթնացած
Քեզ էլ կօրհնեն և քո ՏԻՐՈՋ միայնակ։

Մի՞թէ եղբա՛յր, և մենք մի հօր զաւակ չենք,
Անքակտելի պատուէր առած հրեշտակ չե՞նք.
Ուրեմն դու քո պաշտօնում կա՛ց արի,
Թո՛յլ տուր ապա ՏԻՐՈՋ հրաման կատարի։

Երբոր այսպէս քնոյ հրեշտակն ճիշդ պատմեց,
Իւր պաշտօնակից եղբօրը պինդ գրկեց,
Իսկոյն մահուան հրեշտակի դէմքումը
Ուրախութեան քաղցր ժպիտ փայլ տուեց։
Ի Շամախի 1866 ամի։

ԿԱՐԱՊ, ԿՈՆԿԱԶՈՒԿՆ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ

Ազատ թարգմանութիւն Ռուսականից։

Երբ չեն ընկերը համաձայն,
Ո՛չ կատարի գործն այն,
Զուր նեղութիւն և ունայն
Իւրեանց անձանց տան միայն։

Մի օր կարապ թռչունը
Կոնկաձուկն խեցգետինը
Բեռն տանել կամեցան
Մեծ փափագով երկքեան։

Երբ որ նոքա միասին
Լծորդ եղեն մէկ բեռին,
Նոցա աչքին լուծ թեթև
Երևեցաւ բեռն և։

Է՛կ տե՛ս վիճակ այն սայլին
Եւ բեռնակրաց քայլին.
Փոխե՞ն արդեօք համաձայն
Թէ նոքա ի զուր ջանան։

Ո՞հ, կապ դաշանց աննման
Եղև արժանի լուծման,
Ո՛չ լծակից, ո՛չ նման,
Անպէտք էին և ունայն։

Այո՛ թռաւ կարապը
Դէպի բարձր դէպ յերթեր.
Նա դաշինքն և կապը
Բեռն տանիլ ի՞նչ գիտէր։

Խեցգետինը դէպի ետ
Մղումէ իւր ոտք ու հետ,
Սայլը լուծը միահետ
Հաղիւ չեղեն և անհետ։

Կռնկաձուին նոյնպէս և
Դէպի ջուրը խիստ ջանայր,
Կոյրի նման արդա՛րև
Ոչինչ գիտէր և ո՛չ սայլ։

Ո՞վ է արդար սորանցից,
Ո՞վ արժանի անիծից,
Փոյթ չէ բնաւ մեզ գիտել
Զիսկն, սուտն, և դատել։

Գիտենք այո՛ այդ միայն,
Երբ չեն ընկերք համաձայն,
Ուստի մնայ բեռն այն
Անշարժ միշտ և յաւիտեան,
Ի Շամախի 1868 ամի,

ԱՌԻԻԾ ԵՒ ՄՈՒԿՆ

Փոխադրութիւն Հայկական արձակ շարադրութենից։

Մէկ ապահով դաշտավայրում առուծը
Ընկողմանեց լցուցանել իւր խղճը.
Մինչդեռ թմրած նիրհել կամէր ըստ կամայ,
Մուկն գետնից ներքին դոներ արաւ բաց։

Երբ իւր ընթացք խառար ծակից դէպի լոյս՝
Փոխեց արագ, ինքն իրան տալով յոյս—
,, Թէ դուրս գնամ, ուտեստ դտնեմ ուտելու,
Անգութ սովից գոնէ ջանամ ապրելու։''

Իւր ծակծակոտ անձուկ դռներ տեսաւ փակ,
Մէջքին ընկած սէգ առիւծով մեծասիրտ,
Ուստի մնաց և անկատար իւր փափագ,
Չի առիւծն ձգել էր դող նորա սիրտ։

Սովից ստիպուած իւր ծակերից դուրս գալով
Անհանգիստ էր առնում թեքուած առիւծին,
Բայց վերջումը նորա ձեռքը ընկնելով
Գերի եղեւ ճիրաններում առիւծին։

—,, Մի՞թէ դու ինձ չես ճանաչում ո՛վ ընչին,
Կամ չե՞ս լսել իմ անունը իշխան հին.
Որ դու այդպէս վրդովումես իմ քունը,
Պատճառելով անանդորր իմ անձին. ''—

—,, Այս պատճառով դու կլինիս արդէն զոհ
Իմ որկորին, զի քեզանից եմ ուժգոհ.
Մի՞թէ դու իմ փառք պատիւը չգիտես,
Կամ իմ ոյժը, որով մեծ եմ կոչվում ես։ ''

—,,Թո՛յլ տուր, ասաց, ես խեղճ մուկն եմ անպիտան,
Դու լաւ գիտես, որ քո աչքին եմ ունայն.
Ինձ զոհելով արդ անխնայ, ո՛վ հզօր,
Չի յղփանալ քո ահագին որովայն։ ,,

,, Թո՛յլ տուր գնամ այս դաշտերում որսալու,
Քիչ կերակուր գէ՛թ որոնեմ դտնելու,
Այնուհետև պատրաստ եմ քեզ օրհնելու.
Մինչև իմ կեանք քեզ հզօրիդ զոհելու։,,

Անմեղութիւն և դաշինքը խեղճ մկան
Բանալ տուին այն ահարկու պինդ փական.
Որից ազատ ըստ իւր կամայ բնական
Վարէր անդ կեանք, ուր էր մթին խոր ական։

Ժամանակը գլեց գլան և շրջան,
Թակարթվեցաւ շուտով հզօր առիւծն այն,
Ուր նա անել քեմխտապատ ճոպանով (1)
Այնքան ձնշիւր, մինչ ոյժ և յոյս իւր հատան։

Երբ որ լսեց երախտապարտ խեղճ մուկն
Իւր առիւծի կաշկանդվիլը թակարթով.
Շուտ գործ դրաւ շատ աշխատանք շատ ճիգն
Որ ազատէ որոգայթից շատ շուտով։

(1) կաշիով պատած չուանով

Յ. Խ. Բ. Մ. Պ ա ր տ ի զ ի կ.

Բարեկամներ և ընկերներ ժողովեց,
Նոցա հետ նա պայման և դաշինք կապեց՝
Եկաւ հասաւ մօտ առիւծին ջանալով
Շուտ ազատեց, ներդեայ (1) պարան կրծելով։

Այս կատարի այն իմաստուն ասացու ծ–
„Թէ ինչ կանես, քեզի կանես.“ զգացի՛ր,
Սա մի խորհուրդ պատուական է պարզ
յայտնուած
Ո՛վ բանական մարդ զգայուն իմացի՛ր։

Որքան լինիս զօրեղագոյն քան զառիւծ,
Չպէտք է որ յետին անձին անարգես.
Եւ քեզ ապա կհասնի ժամ որ նոյնպէս....
Քեզ նա կօգնէ. որին արեր դու անտես,..

ի Շամախի 1868 ամի

(1) քիրիշ

ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ։

Ազատ թարգմանութիւն Ռուսականից։

Խղճո՛յկ, լի՛ր աշխատող և աղնիւ հոգւով
Դու միշտ աշխատի՛ր ամենից առաջ,
Թէ աղմուկի պատահես, շատ շուտով
Հեռացի՛ր զզուելով ամենից առաջ։

Ամենից առաջ ամենից առաջ
Մեծաւորների առաջև մի՛ գունատվիր,
Մեծութիւնն է կնիք. իմացի՛ր,
Եւ նշան ոսկու, և ուրիշ ոչինչ։

Թո՛ղ լինի ճաշդ չորաբեկ հացը,
Եւ հասարակ կտաւից քո բաճկոնը,
Միշտ թաւշեայ հագնող մնապարծը
Բլուան է այո՛ ամենից առաջ։

Ամենից առաջ ամենից առաջ
Տիտղոսն է նորա յիմար նշանը,
Խղճուկը թէ միայն լինի ազնիւ,
Է նա թագաւոր ամենից առաջ։

Ահա դա պարոն և մեծ իշխան է,
Դրանից, ասա, ո՞վ ինչ օգուտ կառնէ,
Եթէ իւր հարստութեամբ վստահ է,
Սակայն յիմար է ամենից առաջ։

Ամենից առաջ ամենից առաջ
Թո՛ղ ամեններս էլ լինինք աղնիւ,
Ազնուութիւնը բարձր է աստուծանից,
Եւ մարդու խելքը ամենից առաջ։

Աղօթենք միշտ առ Աստուած, որ նա տայ
Մեզ իւր թագաւորութիւնն մշտակայ,
Եւ մեր աղնիւ վաստակը աշխարհում
Լինի յարգելի ամենից առաջ։

Ամենից առաջ ամենից առաջ,
Երեկ, այսօր, միշտ և յաւիտեան
Որ և մարդկանց հետ մարդիկ ամենայն
Լինին սէր եղբայր ամենից առաջ։
Ի Բագու 1872 ամ։

ՄԱԹՈՍԻ ԹԱՄԱՐ

ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ։

ՄԱԹՈՍ ԵՒ ԹԱՄԱՐ.

Ա.

Հայոց աշխարհում Հայոց մի գիւղում
Երկու մատաղհաս ամուսինք կային,
Որոնք միշտ տխրում զանգատում էին
Եւ տէրից միայն մի զաւակ խնդրում:

Մարդու անուն Մաթոս կնոջը Թամար,
Սերտ սիրով կապուած յուսադրում իրար.
Եթէ մեռանիլ անգամ հասանէր,
Մէկը կ'զոհվէր իսկ միւսի համար:

Ամիսներ անցան տարիներ անցան,
Դոցա ցանկութիւնք չկատարուեցան.
Այնուհետև ուխտ և խնդրուածներ
Սորան կամ նորան յաճախ կրկնուեցան:

Մօլլա (1) գիր անող, պառաւ հմայող
Շուտով Թամարի հետ ծանօթացան.
Սև հաւէր էր որ մորթումէր Մօլլան,
Պակաս չէր խաբում և պառաւն հմայող:

---

(1) Տաճիկ դպիր, որ հիւանդների և ամուլների համար կախարդական գրեր է գրում Թանաքով կամ

Երբեմն արիւնով երբեմն թանաքով
Հայերէն թուքերէն գրեր էր գրվում.
Թամարի վիզը փոխանակ մանեակով
Կախարդված պաճոյճով էր զարդարվում։

կենդանիների արիւնով. զորօրինակ սև հաւի, աղաւնու, ագռաւի, յոպոպի (կկու) և այլն։ Այս տեսակ գիր անողներ գտանվումեն Հայոց շատ գիւղաքաղաքում Հայկական տառերից հաղիւ բառ կազմել և արտասանել իմացող գիւղական մշակ տիրացուներից։ Այն անձն, որ ինչպէս և իցէ, թէ կարողանում թըղթի երեսը նախշել սև ացնել կամ մի անուն ստորագրել, ունի համարումն գիւղականների մէջ, որ և կոչվում իւր գրագիտութեամբը տիրացու. այդպիսիների մօտ դիմումեն շատ անգամ անգրագէտ գիւղականները մի նամակ գրել կամ կարդալ տալու և կամ հիւանդների համար գիրան ել տալու։ Այդ տեսակ տիրացուների ձեռքում գտանվումեն կախարդական գրուածներ հին թղթերի և կամ մագաղաթների վերայ գրուած։ Եւ այդ գրուածները նոքա վերաբերում յատկացնումեն Սողոմոնին, և այնպէս համոզուած են, որ անշուշտ կկատարուին այն ամենը, ինչ որ գրուածեն նորանից։

Շատ անգամ գիրեն ան ել տալիս և ամուլ կանանց համար։ Այդ գրերից մի քանիսը նախշուն

Բ.

Մի երկոյ այր ու կին խորհուրդ տեսան
Իրանց օգտաւէտ մի գործի համար,
Որ պիտի Մաթոսն հեռանայ գիւղից,
Այո՛ հեռանայ և սիրականից։

նախշուն (խայտաբղէտ) շորերի կտորներով զարդարած կապումեն ուսին, կամ մէջքին և կամ կախում կուրծքի վերայ։ Այդ տեսակ գրերով զարդարվածեն լինում և պարանների (կանեպ) վերայ Հայ. Տաճիկ և Լեզգի պարողները (ֆահլեվան) իրանց պահպանութեան համար։

Ամուլ կանանց տանումեն և „ծակ քար՝՝ անուանված ուխտատեղին, որ համարեա թէ ամեն տեղ գտանվում, ինչպէս կայ և Շամախում քաղաքի մօտ Խիւնիւստուի– մի Տաճկական գիւղ գերեզմանատանը. ուր դիմումեն յաճախ թէ Հայեր թէ Տաճիկներ և սեղմուելով անցնումեն այն „ծակ քարի՝՝ տակից զանազան հիւանդութեանց և պակասութեանց պատճառաւ։

Հայոց գիւղօրայքում լինումեն և „Գայլի բերան կապողներ՝՝ Հայ պառաւներից կամ յիշեալ գիրանողներից։ Այսպէս է լինում, զ.օրինակ, եթէ մէկի անասունը մնում գիշերը դաշտում, կասկածելով որ մի զուցէ գայլերը պատառեն անասունին, գնում գիրանողների և կամ գայլերանկապող պառաւների մօտ, որ միայն իրանց յայտնի աղօթքով

Դոցա մեղրաձոր խօսակցութիւնը
Յափշտակեց միմեանց ուշք ու միտքը,
Զնայելով որ սփռումէր քունը
Եւ իւրեանց վերայ իւր քաղցրութիւնը։

Փակեց և դոցա աչքունքը ցօղած,
Պատճառեց և լռումն խօսակցութեան,
Որոնք սերտ սիրով միմեանց խարսած
Հնաղանդեցան այո՛ և բնութեան։

կապումեն գայլի բերանը դանակի վերայ կամ այլապէս։ Կապուած դանակը չպիտի բացուի մինչև անասունի դանդիլը։ Սեր Հայ գիւղականները մեծ մասով այնպէս են համոզուած այդ մեռոնապաշտութեանը, որոնք մինչև անգամ իւրեանց նախապաշարմունքը հաստատելու համար պատմումեն թէ "Մէկ մարդի անասուն մէկ գիշեր մնացած է լինում դաշտում։ գիւղականը կապել է տալիս գայլի բերանը իւր դանակով, և առաւօտեան վաղ գնումէ իւր անասունին որոնելու։ դտնումէ անասունին դաշտումը շրջապատուած գայլերով։ բայց գայլերը չեն համարձակվում մօտենալ անասունին։ Անասունի տէրը ասումէ, մէկ փորձեմ, դանակս բաց անեմ, տեսնեմ ի՞նչ է լինում,

Երբ կենդանի ժամացոյցը գիւղական
Կանչեց ,,ծուղրուղու՝՝ մի քանի բերան,
Մաթոսը զարթնեց տեղում նստելով,
Նայեց քուն կնոջ թառաչ հանելով։

Փոքր ինչ լուռ մնչիկ նայելուց յետոյ
Գրտինքով ցօղած թամարի դէմքին,
Բայեաթի (2) երգով զարթեցրեց նորան,
Որ պատրաստէ իրան ճանապարհելոյ։

Արարին միմեանց ուխտ և խնդրուած,
Ջերմաջերմ համբոյր իրար երեսաց,
Գիրկ, գգուանք և քաղցր խօսուածք
Յուձախ կրկնուեցան միմեանց փոխադարձ։

Մաթոսը հաւախօսին գնաց դէպ դուրս.
Որ բերէ իւր ձին, պատրաստէ փութով.
Ասաց Թամարին ,, Դու էլ շուտով
Պատրաստի՛ր զէնքս հացս ու ջուրս՝՝։

հետևանքը. դանակը բացումէ թէ չէ, գայլերը խափան պատառումեն անասունին տիրոջ առաջ։՝՝

(2) Թուրքերէն ողբերգական երգ։

Թամարը շուտ հայց կարագ պանրի հետ
Դրեց առաստաղէս Մաթոսի հարգում,
Եւ տուաւ նորան մի համբուրի հետ,
Խնդրելով ճանապարհ բարի յաջողում։

Դեռ լուսինը-Երկնային թագուհին
Լուսաւորում էր Մաթոսի ուղին,
Երբ նա մտրակից իւր նժոյգ ձիոյն
Ընկաւ ճանապարհ դէպ քաղաքն հին։

Երբեմն լուռ մունջ լուսնին էր նայում,
Երբեմն երգող սոխակին լսում,
Երբեմն ինքն էլ բայեաթի երգում,
Վերջումն էլ թառաչ սրտիցը հանում։

Զմայլած Մաթոսը այդ տեսարանով
Անցնում էր երբեմն սարերի միջով,
Երբեմն սահող կարկաչող ջրերով
Նորա ուշքն ու միտքն էին գնում։

Եւ արևն շուտ վառ արշալուսով
Ոսկեզօծեց սարեր, բլուրներ, դաշտեր,
Բայց և Մաթոսի ձիու ոտները
Լուացվում էին մարգարտեայ ցօղով։

Կանաչը թաւշի պէս էր սփռուած
Դաշտերի վերայով, որով անցնում էր։
Կարծես Երկնային մանանայ ինջած՝
Ցօղն առաւօտեան պայծառ փայլում էր։

Գ.

Կէսօրվայ ժամին հասաւ աղբիւրին,
Որին հովանի էր մեծադիր կաղնին,
Ուր նորան քաղցը հարկադրեց ինջելը
Ինջաւ և կապեց կաղնուցը իւր ձին։

Լուացաւ շուտ ձեռքերն ու երեսը,
Եւ նստաւ ծառի տակ խոտի վերայ,
Բացեց հարգէն հանեց պաշարի կէսը,
Շարեց կարգով կանաչ սուփրի վերայ։

Բայց մի գաղտնի հոգս, որ ունէր սրտում,
Իւր ախորժակին արգելք էր լինում։
Նա կուլ էր տալիս պատառը դժուար,
Նա ամեն րոպէ թառաչ էր հանում։

Դեռ նա մի քանի պատառ չկերած,
Տեսաւ մի ծեր հայ սափորը ուսին
Դիմում աղբիւր ոտներով յոգնած,
Խնդրեց նորան գալ հայց ուտել միասին։

Ծերը մնաց զարմացած սիրով,
Եւ նստաւ հանգարտ Մաթոսի մօտին.
Ապիրը խոսի վերայ դնելով,
Եւ աչքը գցեց Մաթոսի աչքին.

Որ և տուաւ նորան օղի մի բաժակ,
Որ պիտի բանայր նորա ախորժակ,
Ծերը օրհնութիւն թաղնելով բերանից
Դարտակից բաժակը, եղաւ գոհանակ։

Ասաւ հայ, խաչակնքից երեսին,
Կերան կշռացան երկուսը միասին,
Փառք և օրհնութիւն տալով Աստուծոյն
Միմեանց կեանք յաջողութիւն խնդրեցին։

Զուարթ ծերը սկսաւ ընկողմանել
Թաւշեայ խոսի վերայ հովանու տակ,
Երբ այն պարզ սեղանը վերջացաւ,
Երբ իւր թոյլ սիրտը փոքր ինչ զօրացաւ։

Որին հետևեց մի թառաչ և մի հարց—
Թէ ,,Եղբայր Մաթոս, ո՞ւր ես գնում,
Խնդրումեմ, ասա՛ նպատակդ ինձ բաց,
Ասա՛ ես քո բարին եմ ցանկանում։ ‘‘

Ասաց Մաթոսը ,, Եւ ես չգիտեմ,
Չգիտեմ հայրիկ, թէ ուր եմ գնում,
Ինձ յանձնելեմ այժմ ճակատագրին,
Որից և ես փորձ փորձել եմ ուզում։‘‘

,, Բայց գիտե՞ս, հայրի՛կ, աշխարհիս մարդիկ
Քանի գնումեն խիստ վատանումեն.
Փոխանակ միմեանց սիրել օգնելու,
Ատումեն միշտ և ազահանումեն։ ,,

,, Միմեանց սեսնելով մենք էլ ենք վատանում,
Ոսկու արծաթի ետևից ընկնում,
Սուտ, երդում, յիշոցք, անէծք . . . չէ մնում
Որ փողի համար մենք գործ ենք գնում։‘‘

,, Մինչև անգամ կան, կան և այնպիսիք.
Որք կվաճառեն հայր, մայր ու ընտանիք,
Որ ընեն իրանց քսակը անոտակ,
Որ գէթ կատարվին չար կիրք նպատակ։,,

,, Դորանից առաջ հիւրասիրութիւն,
Սէր, պատիւ և բարեկամութիւն
Գտանվում էին մեր գիւղերայքում.
Բայց այժմ կտեսնես ինչ— ատելութիւն.

,, Վէճ, կռիւ, յիշողք՝ անէծք, զրպարտութիւն,
Սուտ, բամբասանք, թշնամութիւն,
Եւ ախտ բնութեան հպարտութիւն,
Եւ հետևանք դոցա անհաւատարմութիւն։‘‘

,, Կանանց չար և սերմող մշակին,
Կլանս յիշողք իւր անասունին,
Սերմածը անպէտք և ինքն անուս,
Տանջվումէ դաշտում չարացած անյոյս։‘‘

,, Նա մի կողմիցը պարտքի տակ թաղուած,
Անիծումէ միշտ իւր կեանքը ցաւած,
Հարուածելով իւր խեղճ անասունին,
Կարծէ թէ պարտքից կրնի ազատված։‘‘

,, Դեռ հունձը պրծած կալը չ՝կասած,
Իւր պարտատէրին տեսնումէ կանգնած
Մուրհակը ձեռին կամ փող է ուզում,
Կամ կասած ցորեանը ձեռքից է խլում։‘‘

,, Այս է մեր վիճակն աննախանձելի,
Այս է մեր օր ու կեանքն գառնալի,
Այժմ չգիտեմ, թէ ուր եմ գնում,
Եւ թէ երբ նոր կեանքի մէջ եմ մտնում։‘‘

Այդ խօսքերով վառված ծերը յանկարծ
Ժիր պատանու պէս կանգուն նստեց,
Զգելով մի հայեացք դէպ Մաթոն ցաւած,
Եւ յետոյ իւր ցաւն պատմել սկսեց։

,, Իսկ և մեր գիւղում կան այդ ցաւերից,
Որոնց տանումեն ծերերը միայն,
Մենք շատ ենք տեսել աւելի դրանից,
Խիստ դառն օրեր Պ. և Տ. ազգերից։‘‘

,, Գիշեր ու ցերեկ դողը մեր սրտում
Թափառել ենք միշտ սարում անտառում,
Մեր կահ կարասիք ոսկի և արծաթ
Թաղելով տանը կամ անյայտ տեղում։‘‘

,, Գիշերն երկիւղից կրակ կամ ճրագ
Վառել անգամ մենք չենք համարձակվել,
Բուի պէս խաւարում բերանափակ,
Երբեմն սոված թաղնուած ենք մնացել։‘‘

,, Ցերեկը ձորում անտառի խորքում
Դարանի մտած էինք քչփչում,
Թէ մի՝ զուցէ խումբն ասպատակների
Լսելով մեր ձայն տան մեզ ճարակ սրի։‘‘

,, Ազգ ու կրօն ենք պահել այնպիսի դարում,
Հայր ու մայր ենք պատուել լայն ու նեղ կեանքում
Ընտանիք աղջկունք մեր հովանու տակ
Պաշտպանուել են միշտ սուրբ պատկառանքում.''

,, Ես տեսել եմ իմ մատաղ օրերում,
Որ որդին հօրը շալկած էր տանում,
Երբ նա տկար կամ հիւանդ էր մնացում,
Կամ ծերութիւնից անզօր էր քայլում:''

,, Այն ժամանակ մենք միայն գոհ էինք,
Եթէ հաց ու հագուստ ունենայինք,
Եւ այն ազատ ուրախ թէ վայելէինք,
Միայն Ազգից հաւատից դուրս չգայինք:''

,, Ծերը հաւատին հաստատ մնալով
Ծառումէր վիզը թշնամու առաջ,
Իւր որդւոց, հարս աղջկանց խրատ տալով,
Ինքն էր զոհվում ամենից առաջ:''

,, Երիտասարդը սուր թուրը ձեռին
Պաշտպանումէր նախ իւր ընտանիքը,
Նա հալածելով թշնամիներին,
Փրկումէր չարից անմեղ հոգիքը:''

,, Հայ աղջիկն այն ժամանակ անհամբեր
Եղբարց հետ թշնամու դէմ մաքառումէր,
Եւ առաքինութեամբ յօրինակ այլոց,
Հռիփսիմէի պէս վստահ զոհվումէր:''

,, Ղրքա խաբվումեն այժմ շատ շուտով,
Ինչպէս մանուկը մի խաղալիքով.
Ազգ կրօն փոխել շատ հեշտ է այժմ
Ենդաւոր սիրով ոսկով արծաթով:''

,, Այժմ օրիորդներն այնպէս են խաբվում,
Ինչպէս խաբվումեն մարդիք վայրենի,
Տ՛ուր նորանց շինծու բաներ, որ լաւ են փայլում
Սորանց կոմպլիմէնտ զարդ և հագուստ մոդնի:''

,, Այժմ մեր որդիք նայում են մեզի
Ինչպէս ցաշիկը նայում է խոզի.
Չկայ էլ պատիւ, չկայ և սուրբ սէր,
Որի մէջ կեղծ խաբ խառնուրդ չլինէր:''

,, Այժմ որին կարդում ես տանուտէր,
Նա գնում է ձմերուկ (1) իւր կուանտակին,
Փքվում է նա կարծելով իրան տէր,
Կամ թագաւոր և կամ աստուած գիւղին:''

(1) զարվուզ

,, Նա չգիտէ օրէնք, ի՛նքն է օրէնքն,
Վ՚ճռում է այնպէս, ինչպէս է իւր կամքն,
Մեղաւոր աղքատն է, արդար հարուստն,
Զրկվում է աղքատն, շահվում հարուստն։''

Այդ խօսքերից յետ Մաթոսն մունջ լուռ
Մի թառաչ հանեց իւր սրտի խորքից,
Կանգնեց ոտքի, առաւ հարգէն տխուր,
Մնաք բարեաւ ասաց, հեռացաւ ծերից։

Դեռ արևն վերջին ճառագայթներով
Ոսկեջրում էր օարերի գագաթներ,
Դեռ արտուտներն երեկոյեան երգերով
Զուարճացնում քաղաքից դուրս շատ սրտեր.

Դեռ փայլում էին քաղաքի միջում
Եկեղեցեաց գմբէթների խաչեր,
Դեռ ամբոխն հրապարակներում
Աստ ու անդ առնում անց ու դարձեր։

Մտաւ նա քաղաք հոգսերով լեռնուած
Տեսաւ շատ շէնքեր սիրուն զարդարուած,
Որոնցով այնքան նա չէր զարմացած,
Որքան խառն մաքերով էր ձեշուած։

Զունէր նա այնտեղ իրան ազգական,
Զունէր նա ընկեր ծանօթ սիրական,
Պանդոկն էր միայն նորա օթևան,
Որին պիտի տայր հաշիւն օրական։

Վարձեց նա շուտով մի փոքրիկ սենեակ,
Մտաւ բնակվել այնտեղ միանակ,
Առաջին գիշեր երազում տեսաւ,
Որպէս թէ իրան մէկ ծեր մօտեցաւ,

Մի նուռ մի խնձոր ձեռքում ունելով,
Տուաւ Մաթոսին ողջունով սիրով,
Տուաւ և ասաց ,, դու դորանց պահի՛ր,
Հո՛տառ խնձորից, և մեխիթարուի՛ր։''

Մաթոսի սիրտը կուրծքի տակ թռթռաց,
Երբ այս վերջին խօսքը լսեց ծերից,
Կարծես թէ իւր այրված սրտին ցօղաց
Ցօղ զովարար ցօղ պայծառ երկնքից։

Սիրեց փայփայեց նա ջեր դին սրտով
Մերթ նուռն սիրուն մերթ խնձորն հոտով,
Բայց ծերի խօսքը շուտ մոռանալով,
Զոհեց խնձորն, տեսաւ լի արնով։

Որից զարհուրած նա զարթնեց յանկարծ,
Տեսաւ երազ է, ինքն պանդոկում
,, Սա ինչ էր արդեօք, ով էր Աստուած....
Որ ինձ յայտնեցիր գիշերս երազով...։

Դ.

Մի պարզ առաւօտ դեռ շողն արևի
Մաթոսի սենեակում փայլէր տալի,
Մի ծեր մարդ ձեռին բռնած մի նամակ,
Մօտեցաւ դռնին ու մտաւ սենեակ։

Տուաւ Մաթոսին նամակը գրած։
Որ մի սերտ բարեկամից էր գրուած,
Նա աւետումէր ծնունդ Թամարին,
Որ վերջապէս հասաւ իւր նպատակին։

Նա ծնաւ երկու, զաւակ երկոքեակ,
Մի քան զմի սիրուն որպէս լուսնեակ։
Որոնց մէկն էգ և այն անդրանիկ,
Միւսն էր արու զաւակ սիրունիկ։

Մաթոսի դէմքը յանկարծ պարզեցաւ
Ինչպէս արեգակ ամպերի տակից,
Նորա հոգածու դէմքում փայլեցաւ
Յանկարծ խնդութիւն իւր սրտի խորքից։

Նա խնդրեց ծերին նստել իրա մօտ,
Պատմել իւր անցած ծերացած կեանքից,
Նա զոհ էր նորանից, որ այդ առաւօտ
Տուաւ բարի լուր իւր ընտանիքից։

Ծերն էր հին վաճառական փորձված,
Շատ յաջող ճախող կեանքի ենթարկուած,
Սակայն ուրախ էր և զուարթ դէմքով,
Առողջ էր մարմնով և առողջ մտքով։

Նա սիրեց զոմից կեանքն գիւղական,
Ուր սիրում տարրը Նահապետական.
Ուր պարզ է կեանքն պարզ և ամեն բան,
Ուր ուրախ է գիւղացին քրանաջան։

Ուր դաշտերն են սիրուն զարդարված՝
Խոտով. ծաղկունքով. թռչնոց երգերով,
Եւ արտերն լաւ հերկուած մշակված՝
Տալիս են յոյսեր արդար արդիւնքով։

Ուր երամ երամ սիրուն թռչուններ՝
Խաղումեն երգում զանազան երգեր.
Հայաստանին կարծես սիրահարված՝
Նորոգել կամին նորա աւերակներ։

Ուր հարսն ու աղջիկ և տղամարդիկ
Թև թևի տուած դաշտերի վերայ
Խուրձեր են կապում բարդ 'ի բարդ ուրախ,
Սրտո՛վ սուրբ և պարզ, հոգւով անխարդախ։

Ուր անխոնջ մշակը հնազանդ բնութեան՝
Փակում է աչքը քնով քաղցրութեան,
Պարզ, ուրախ, զուարթ և առողջ ընտանեօք՝
Քուն մտած է նա գիշերն ամենայն։

,, Բայց ասա քաղաքում թէպէտ և մարդիկ
Վարումեն որպէս կեանք փափուկ փարթամ։
Սակայն հոգսերով և թոյնով են լիք,
Զուրկն խաղաղ միտք և ո՛չ քուն, անգամ։,,

,, Այստեղ մաշվումեն պէնտիլրութեամբ,
Եւ թունաւորվում սնափառութեամբ,
Թէ երիտասարդք և թէ օրիորդք՝
Մոլի են կրից հեշտասիրութեամբ։,,

,, Գիշերները միշտ բնութեան հակառակ
Վարվումեն մարդիկ, հոգածու կեանքով,
Ծխով, խաղերով, տներում փակ,
Մաշվումեն սրտով մաշվում և բարքով։,,

,, Պաշտվումէ այստեղ քաղցր Մամոնայն (1)
Պաշտվումեն և երկրպագուք նորան,
Նորա անունով և նորա համար
Գիտե՞ս ինչեր են լինում անդադար....,,

,, Ով ունի նորա փայլուն փետուրից,
Պճնվում է աւել սիրամարգից.
Եւ շլացնում շատ աչք ճշմարիտ լուսից,
Եւ շեղում մարդկանց սուրբ բարի կէտից։,,

,, Թէ տէր և տիկին, ծառայ և աղախին
Զունին պարզութիւն սրտի մաքրութիւն,
Խորամանկ բնութեամբ միշտ մէկը միւսին
Խորհում է ծածուկ դաւաճանութիւն։,,

,, Որին պարզութեամբ թէ բացես սիրտդ,
Եւ յայտնես նորան բարի զգացմունքդ,
Նա քո ոտքերին գաղտնի որոգայթ՝
Լարում է լարում շատ շուտով անյայտ։,,

,, Չկայ պարզութիւն և վաճառներում,
Չկայ ճշդութիւն և հաշիւներում.
Վ ստաւոր ու գնողն պատիր խօսքերով
Ամեանց խաբել նենդել են հնարում։,,

(1) Մամոնայն հարստութեան չաստուածէ.

,, Մէկին թէ դու մէկ գումար յանձնեցիր,
Կարծումէ թէ այն իրան բաշխեցիր.
Մոռանումէ շուտ հաշիւ, ճշդութիւն,
Ամօթ, յարգանք և հաւատարմութիւն։‘‘

,, Նա գործ է գնում հնարք միջոցներ,
Սուտ, երդում և խորամանկութիւններ,
Որ սեպհականացնէ իրան այն,
Որի համար տէրն թափելէ քրտինքներ։‘‘

,, Քի՛չ է դատնվում, որ ծառայն ու տէրն
Խղճին ուխտեն միշտ հնազանդութիւն,
Կամ չէ՛ գնահատում ծառային տէրն,
Կամ ծառայն չունի հաւատարմութիւն։ ‘‘

,, Հաւատարիմ ծառայն սպասում միշտ,
Որ մեղրակի պէս լուսատրվի տէրից,
Նա տանում ծանրութեան, կրում վիշտ...
Բայց վերջում մնում զուրկ խաբված յոյսից.‘‘

‘‘ Հաղուագիւտ է մեզանում թէ մի տէր
Գնահատում միշտ քրանաջան ծառային.
Նա ստանում յարգ, պատիւ և սէր,
Եւ անմահացնում իւր անուն մարդկային։‘‘

,, Թէ մէկի հետ ունեցար դու մի վէճ,
Գտանվումեն շատ շուտ գրգռողներ,
Փոխանակ հաշտութի՛ւն ձգելու մէջ,
Ցանումեն գրգիռ չարութեան սերմեր։‘‘

,, Թէ կամեցար ունենալ փաստաբան,
Որ նա դատի մէջ լինի քեզ պաշտպան,
Դու քեզ մատնեցիր աղահ ազգին,
Որին քաղցր է ծծելը քո արեան։‘‘

,, Թէ չունիս արհեստ, բարձր դիտութիւն,
Ջանաղան շնորհք, մարդավարութիւն։
Դառն կրնի քեզ ապրիլ քաղաքում,
Դառն կանցնին օրերդ թշուառ կեանքում։‘‘

,, Այս խօսքերից յետ տիրեց լռութիւն,
Ծերին ամպի պէս պատեց տխրութիւն,
Նա տուաւ հրաժեշտ Մաթոսին շուտով,
Մաղթելով նորան կեանք յաջողութիւն։

Ե.

Ժամ ինչին տաքին պանդոկը լցուաւ
Շատ վաճառական հարուստ մարդկանցով,
Ուր առևտրականութիւնն սկսաւ,
Թէ ապրանքով թէ ոսկով արծաթով։

Մաթոռը այնտեղ նայումէր ապշած
Վաճառող գնող մարդկանց բազմութեան,
Նա տխուր տրտում անդ սառած կանգնած
Ներկայ էր նոցա խիստ հարստութեան։

Մէկ տեղ մէկը լուռ չափումէր կտաւ,
Իսկ մէկը նոյնպէս ծալումէր շտապաւ.
Բայց միւսը պէտպէս գովեստներ էր որ
Տալիս էր տալիս իւր ապրանքին բնաւ։

Մէկը ճիշտ կշռով կշռումէր կշռում,
Բայց միւսը անխիղճ շեղումէր շեղում։
Մէկը քիչով գոհ ուրախ էր սրտով
Բայց միւսը ժժգոհ մաշվումէր մաշվում։

Մէկը իւր հին պարտքն էր վճարում,
Միւսն նոր պարտքի մուրհակ էր գրում։
Մէկը ընկերին օգնել էր սիրում։
Միւսը շատերին խաբել էր ջանում։

Մէկը աղքատին ձեռք էր կառկառում,
Միւսը տնանկին հալածում փախցնում,
Մէկը մերկին շորեր էր հագցնում,
Միւսը կուրին ծաղրում արհամարհում։

Մէկ տեղ ժողովված խօսում են կեանքից,
Միւս տեղ հաւատից և ազգութենից,
Մէկ տեղ ուսումից և լաւ արհեստից,
Միւս տեղ խաւարից-տգիտութիւնից։

Մէկ տեղ անկարգ ուսումնարաններից,
Միւս տեղ սէգ իւր գլուխը գովող ուսուցչից,
Մէկ տեղ անհոգ հոգաբարձուներից,
Միւս տեղ բարձր արհեստանոցներից։

Մէկ տեղ Հայոց ուսումնարաններից,
Եւ նոցա աննախանձելի վիճակից,
Միւս տեղ նոցա դռները փակուելուց,
Եւ մայրենի Հայ լեզուից զրկուելուց։

Մէկ տեղ իւր մայրենի լեզուն ատողից,
Միւս տեղ այլոց թեփրով զարդարվողից,
Մէկ տեղ խորթացած ուսանողներից,
Եւ դէպ հայրենիք նոցա սառնութենից։

Մէկ տեղ ուսուցչաց աննախանձ դրութենից,
Միւս տեղ փառամոլ անհոգ տեսուչներից,
Մէկ տեղ միայն անունով թատրոններից,
Միւս տեղ ընկեր զրկող դերասանից։

Մէկ տեղ խորամանկ թատրոնասէրներից
Եւ ժողովրդեան աչքը կապողներից.
Բարեգործական անուամբ ստիշողից...
Եւ վերջում փոքրիկ կլանողներից...

Մէկ տեղ ազգային գանձապահներից.
Նոցա ոմանց բռնած ողորմելիներից...
Եւ նոցանից հաշիւ պահանջելուց.
Շատերի պահանջը քամին տանելուց:

Մէկ տեղ էլ երեցփոխաններից,
Եւ նոցանից հաշիւ պահանջողներից,
Ծածուկ մեծ մեծ խօսող բամբասողներից,
Եւ յայտնի բարեկամ ձեւացողներից:

Մէկ տեղ Ազգային խմբագիրներից,
Միւս տեղ նոցա տուած խորհուրդներից,
Մէկ տեղ կրքով մրոտված յօդուածներից:
Միւս տեղ լոկ անուամբ հեղինակներից:

Մէկ տեղ ամբարիշտ մեղադրներից,
Միւս տեղ անամօթ համարձակներից,
Մէկ տեղ ուրիշի գրուածները
Փոխող իրանց սեպհականողներից:

Մէկ տեղ ազգի ազգի ընկերութիւնից,
Միւս տեղ շատերի ընկերութիւնից,
Մէկ տեղ խորամանկ սուտ ընկերներից,
Միւս տեղ շատերի խոհեմ վարմունքից:

Մէկ տեղ ճշմարտութիւն խօսողներից,
Եւ նորանց հայրենիքից հալածողներից,
Միւս տեղ փառք ու պատուով կուրացածներից,
Եւ իրանցում խիղճը մեռցնողներից:

Մէկ տեղ կեղծեալ ազգասէրներից,
Միւս տեղ ազգի դաւաճաններից.
Մէկ տեղ հայրենիք պաշտպանողներից,
Միւս տեղ նորա օտար նահատակներից:

Մէկ տեղ անարժան հողեւորներից.
Միւս տեղ նոցա արժանաւորներից.
Մէկ տեղ կոշտ անխոհեմ հովիւներից.
Միւս տեղ նոցա երկպառակած հօտից:

Մէկ տեղ նորանց ,,Ովսաննայով'' ընդունելուց,
Եւ շուտով ''Ի խաչ հան զդա'' ասելուց,
Մէկ տեղ նորանց չարաչար բամբասելուց,
Եւ վերջում անդթաբար հալածելուց,

Մէկ տեղ խեղճ չարչարվող հոգևորից,
Միւս տեղ նորան հալածողներից,
Մէկ տեղ նախանձով կուրացածներից,
Եւ խեղճի վարկը ոտի տակ տուողներից։

Մէկ տեղ ուտելուց և կամ խմելուց,
Միւս տեղ պարելուց և խաղ խաղալուց,
Մէկ տեղ ձոխ փառքից, ածաթից, ոսկուց,
Միւս տեղ հագուստից և պճնուելուց։

Մէկ տեղ հոյակապ շէնքեր շինելուց,
Միւս տեղ եղածի խիստ կործանվելուց,
Մէկ տեղ ոմանց շուտ հարստանալուց,
Միւս տեղ մէկի շուտ աննկանալուց։

Մէկ տեղ մի քանի վաճառականներից,
Տօնավաճառում նոցա բռնած գործերից. . .
Այն տեղից անփող ապրանք կրողներից,
Իրանց երկրում կիսագին վաճառողներից. . .

Եւ մէկ տեղ Ռուսաստանում կապողներից,
Վերջումն իրանց անանկ ցոյց տուողներից. .
Եւ կամ վաճառի տեղը փոխողներից. . .
Մուրհակներն էլ կիսագին գնողներից...։

Մէկ տեղ հաւատարիմ ծառաներից,
Միւս տեղ պինդ ժլատ հարուստ տէրերից,
Մէկ տեղ ողորմած առատ տիկնոջից,
Միւս տեղ աղախնու անվայել կեանքից։

Մէկ տեղ բախտից-յաջողակ վիճակից,
Միւս տեղ անյաջող ձախող գործերից.
Մէկ տեղ ոմանց աղնիւ վարք ու բարքից,
Միւս տեղ պատանեաց անհաճոյ կեանքից։

Մէկ տեղ նստած մի հաստափոր պարոն
Համրում էր հաշվում իւր հարստութիւն,
Գնաց մաթոսը նորան մոտեցաւ,
Եւ տուաւ հանդարտ իւր խոնարհ ողջոյն։

Տուաւ և ասաց ,, Ո՛վ տէր ողորմած.
Ձեզ էլ հարկաւոր արդեօք մարդ ծառայ,
Ես կամիմ մնալ ձեր հովանու տակ,
Լինել ձեզ ծառայ հլու հպատակ։''

Նայեց պարոնը մի խոր հայեացքով
Մաթոսի տխուր կնճռոտած դէմքին,
Եւ հարցրեց նորան թէ ,, Ի՞նչ նպատակով
Կամիս ծառայել մեր հրամանին։''

Ասաց Մաթոսը ,, Ո՛վ ողորմած տէր,
Ինչպէս որ կամիս, ինձ պահիր այնպէս
Միայն թէ իմ խեղճ ընտանիքս անտէր՝
Սովից մերկութենից պահել կարես։''

Երբ լսեց պարոնը ընտանեաց անուն,
Մերժեց Մաթոսի խնդիրը խոնարհ.
,, Ինձ չէ հարկաւոր ծառայ անաւոր,
Մանաւանդ քեզ պէս մի հասակաւոր.

,, Թէ ունիս որդի առոյգ պատանի,
Թո՛ղ նա գայ քո տեղ ինձ ծառայ լինի,
Նորան կ՚հագցնեմ հագուստ գովանի,
Կպահեմ որպէս արքայասրդի։'' (1)

,, Զունիմ ես որդի, պարո՛ն պատուական,
Այնպէս, ինչպէս դուք էք ցանկանում,
Ես եմ միայն կառավարը մեր տան.
Որ օրական հաց գտնել եմ աշխատում։''

,, Ուրեմն գնա՛ բարեաւ տէր ընդ քեզ.
Այժմ ծառայ մարդ չէ՛ հարկաւոր մեզ.
Գնա՛ հարցրո՛ւ այլ պարոններից,
Գուցէ լինի քեզ պահող նորանցից։''

(1) Դա մի սովորական ոճ է, այսինքն լաւ կ՚հագցնեմ կպահպանեմ թագաւորի տղայի նման։

Մաթոսը հեռացաւ այն պարոնից,
Մօտեցաւ գլխակոր մի այլ հարուստի,
Պատմելով նորան իւր դրութիւնից,
Խնդրեց մի պաշտօն մի գործ նորանից։

—,, Ես արդէն ունիմ ծառաներ վարձած,
Եւ իմ գործերը նորանց յանձնուած,
Եթէ շուտ գայիք դուք օրով յառաջ.
Գուցէ մէկի տեղ լինէիք վարձուած։''

Շատ այսպիսի պատասխաններ ստացաւ
Գործ փնտռող ապրուստ խնդրող Մաթոսը,
Նա թառաչով տխուր սրտով հեռացաւ,
Հարուստներից կորելով իւր յոյսը։

Զ.

Օր օրի ետևից սահում էր անցնում,
Եւ Մաթոսի փնտռելն փոխարանում,
Նա ինչ որ ունէր իրա դրպանում,
Հաղիւ իւր ձիւն էր հերիքանում։

Նա մի երեկոյ լաւ տխուր սենեակում։
Ուր միայն ճիպուտների ձայն էր լսում։
Մտածեց փնտռեց նա իրա սրտում։
Գնալ խնդրել պաշտօն պօլիցիայում։

,, Վաղը իմ ձին կհանեմ ախոռից,
Կտանեմ հրապարակ, կվաճառեմ նորան,
Կտամ և ընծայ ձեռք բերած փողից,
Կընկիմ ստոր ծառայ պօլիցիական:(1)

,, Ինձ որովհետև մարդ վաճառական
Չպահեց ծառայ թէ խանութում թէ տան,
Էլ զո՛ւր է խնդրել հարուստներին,
Որոնց ընդդէմ էր իմ հասին ու տարին։''

Մոլորված մտքով խառն հոգսերով
Մտաւ նա 'ի քուն յուսահատ սրտով.
Տեսաւ նա իրան վառաւոր կեանքով
Գնում էր դէպ իւր ընտանիք փափագով։

Մինչդեռ անցնում էր անտառի միջով,
Տեսաւ իւր չորս կողմ մարդիկ զինուորված,
Սպառնում են իրան զէնքերով խօսքով—
Թէ ,, Էջ ձիուց, հանի՛ր շորերդ հագած:''

Սրտովայած նա այդ տեսարանից,
Մինչ պատրաստվում էր փախչել չարերից,
Յանկարծ թնդաց դէպ ինքն ատատիկ
Զայն հրացանների իրա չորս կողմից,

(1) ոստիկանական

Զարթնեց զարհուրած սարսափով դողով։
Տեսաւ նա իրան պատած քրտինքով.
Մի մութ սենեակում տխուր անկողնում,
Ուր միայն ճպռանց ձայներ էր լսում.....

Է.

Առաւօտեան լուսաբացին նա շուտով
Գնաց դէպ ախոռ աչքերը շփելով,
Մօտեցաւ հանդարտ իւր անասունին
Գլուխը շփեց մէջքը քորեց խիստ սիրով։

Տուաւ նա նորան դարի և դարման,
,, Կե՛ր կշտացի՛ր, ասաց, '' իմ անասուն,
Ի՛մ ընկեր, իմ սիրելի՛ անբան,
Դու իմ ստերս ու թեւե՛րս սիրուն։''

,, Քեզ այսօր ես կհանեմ 'ի վաճառ,
Վաճառելոյս էլ ունի շատ պատճառ,
Այսուհետև չեմ լինիլ քո տերը,
Նոյնպէս դու չես լինիլ իմ թեւերը։''

,, Դու ինձ շատ նեղութիւնից ես ազատել,
Բեռն ծանրութիւն ինձ համար շատ ես կրել,
Երբեմն սոված երբեմն ծարաւ
Սարեր, ձորեր. դաշտեր ես չափչափել։''

,, Քո առաջին սուր վազկան եղնիկը,
Ժայռերով թռչկոտող այծեամ որսիկը
Եւ վայրի որսական շատ անասուններ
Տկարացած կանգնած են մեացել։,,

,, Քո արշաւանքին աւազակ մարդիկը
Հասանել անգամ չեն կարողացել.
Վերաս արձակած նոցա չար գնտակը
Քո սուր ընթացքից շեղուած է մեացել։,,

,, Բայց այսօր իմ այդ ամէն յոյսերը
Պիտի կորնչեն քեզ հետ միասին,
Այս օրվանից և իմ թեւերը
Քեզ վաճառելով պիտի կորատվին։,,

Ը.

Ժամ ուներին իններին Մաթոսը բռնած
Իւր ձիու կապը, փողոցում կանգնած
Հրաւիրում էր անց դարձ անող մարդկանց,
Գնել իւր ձին սիրով խնամքով պահած։

Մօտեցաւ մի հարուստ վաճառական
Եւ առաջարկեց այնքան դին նորան,
Որ հաճարեա կէսն էր արժողութեան
Խզնուկ Մաթոսի ձիուն զովական։

Մօտեցաւ մի այլ պարոն ձի հեծած,
Եւ փառաւոր հագուստով զարդարված,
Որ և սկսաւ Մաթոսին հարցնել.—
Թէ ,, Ձիդ փոխի՞ր ձիուս հետ, ա՛ռ փող աւել։,,

Թէ և Մաթոսի միտքը փոխեցաւ,
Որ փոխէ իւր ձին նորա ձիու հետ,
Սակայն պարոնը նորան չտուաւ
Այնքան աւել, որ լինէր օգտաւէտ։

Շատերը հարցրին, դատարկ գնացին,
Ո՛չ ոք չտուաւ արժանաւոր դին,
Բայց 'ի վերջոյ յուսահատ, ստիպուած,
Վաճառեց մի տաճկի վերայ կիսագին։

Եւ ստացաւ շուտ յիսուն արծաթին,
Որից իւր ընտանեաց յղից մի բաժին,
Որ վճարեն հին պարտքից մի մասն,
Իսկ մի մասնով ինքնանք կառավարվին։

Բայց և ինքն շուտ մի միջնորդ գտաւ
Իւր մտադրեալ պաշտօնի համար,
Որին և Բաքոսի տունը (1) տարաւ,
Ուր նորան յարգել պատուելու համար։

(1) գինետուն. իսկ Բաքոսը գինուոյ աստուած է.

Այնտեղ նա տեսաւ ուրախ քաջերին,
Որոնք պաշտօնեայք էին Բաքոսին,
Նոքա Մաթոսին և նորա հիւրին
Շատ սիրով իւրեանց մէջ ընդունեցին։

Այդտեղ կազմեցին մի ուրախ հանդէս,
Եւ խոստացան Մաթոսին մշտապէս
Լինիլ բարեկամ ընկեր սիրական,
Զինայել նորան ողնութիւն պէսպէս։

Այդտեղ Մաթոսը նոր ընկերներից—
Յետ մնալ չկամեցաւ նորանցից,
Նա ևս զոհեց Բաքոսին մի մասն
Իւր ձիուցը ձեռք բերած արծաթից։

Ուխտեց և Նորան հպատակ լինիլ,
Եւ կատարել Նորա կամքը սիրով,
Մնալ հաւատարիմ և ընկեր լինիլ
Նորան պաշտողին հոգւով և մարմնով։

Քաջերից մէկը ջերմ ոգիացած,
Իւր գլուխը խիստ գովել սկսեց,
Գողիատ, Սամփսոն, Աղէքսանդր հռչակված,
Աբամ և Տիգրան անզօր համարեց։

Մէկը նոյնպէս իւր հանճարը գովեց,
Սողոմոնից մեծ իրան համարեց,
Եւ երկնային աստեղներից անգամ
Զանազան աղեկութիւններ տուեց։

Դորանով նա չբաւականացաւ,
Երկրի տակից խորքից պատմել սկսաւ,
Երկրաշարժի պատճառն ու զոյութիւն
Մի ահեղ զօրեղ կենդանու տուաւ։

Բայց և միւսը իւր գործած գործերից
Մի առ մի պատմեց, որն ունէր մտքում,—
,, Թէ ես սկսած գարնան օրերից,
Վարում էի կեանք սարում անտառում։''

,, Ես ունէի ինձ պէս երեք ընկերներ,
Սերտ սիրով կապուած որպէս եղբայրներ,
Որոնց երկուսը մեռան գնտակով,
Իսկ միւսը կորաւ ոտքով ու ձեռքով։''

,, Մի օր միասին մի հովտում նստած,
Վայելումէինք գառան խորոված,
Տեսանք մի անպէտ մարդ ձիաւորված
Անցնումէ հարուստ շորով զարդարված։''

,, Իսկոյն իմ այդ կորած քաջ ընկերը
Մեկնեց անվախ հրացանը դէպի նա,
,, Կանգնի՛ր, ասաց, դու լա՛ւ ընկար մեր ձեռը,
Տո՛ւր մեզ ինչ որ ունիս, ապա թէ գնա՛։ ,,

,, Այն մարդը ձիուց թՂաւ սարսափով,
Եւ մերկացաւ իւր հարուստ շորերից,
Իւր կեանքը փրկեց մեզնից խնդրելով,
Զուրկ շորից փողից, հեռացաւ մեզնից։ ,,

,, Նորա միւս օրը երեք հարուստի
Կողոպտեցինք արծաթն ու ոսկի.
Մէկը խնդրեց իւր փողից մի բաժին
Միայն տուինք իրան իւր սեպհական ձին։ ,,

,, Բայց միւսը խիստ պնդումէր հակառակ,
Զտալ մեզ ոչինչ, և խօսում ներհակ,
Իսկոյն նա մեզնից եղև գնտահար,
Որ ընկաւ ձիուց, մեռաւ չարաչար։ ,,

,, Իսկ երրորդը խեղճ, խոնարհ խօսքերով
Խնդրումէր միայն կեանք աղատութիւն,
Որին մենք արձակեցինք երդումով,
Տալով նորան նոր կեանք-կենդանութիւն։ ,,

,, Մի անգամ ևս երիկնապահին
Գաղաքից դուրս մի կանաչ հովտում
Տեսանք անցնումէ մի հայ պատանի
Մի եզնի կապ բռնած իրա ձեռնում։ ,,

,, Իմ ընկերները շուտ նորան բռնեցին,
Եւ դէպի անտառի խորը տարին,
Ուր նորա ոտք ու ձեռքը կապելով
Ամբողջ գիշերը անխնայ պահեցին....։

,, Առաւօտ ինձ յանձնելով կապուածին.
Իւրեանք թուրքերը որսի գնացին,
Իմ աչքերը վեր չառին այդ բան,
Որովհետև հայ էր այն կապուած տղայ։ ,,

,, Ես նորան արձակեցի խղճալով,
Որ աղատութիւն էր խնդրում լալով,
Որ ունէր միայն մի հայր ծերունի,
Որին ինքն էր միակ մխիթար որդի։ ,,

,, Մի անգամ ևս մօտ մի հայ գիւղից
Բռնեցինք մի հարուստ երիտասարդի,
Որին անտառում կապեցինք ծառից,
Մի օր շարունակ ծարաւ անօթի։ ,,

,, Համբաւ յղեցինք զի՝ զը իւր եղբարց—
Թէ ձեր եղբայրը կապուած է մեզնում,
Թէ չուզարկէք զրամ— ազատութեան վարձ,
Նա պիտի անխնայ մեռնի անտառում։։

,, Նոքա փոխանակ աշխատել վրկելու,
Յղեցին մեզ համբաւ ապատնաչքով,
Ուստի ընկերներս առանց խնայելու՝
Կապուածին այրեցին վառած կրակով։։

,, Ո՜հ... թէ տեսնէիք, ինչպէս էր այրվում...
Ի՜նչ ազաղակով ազաչանք էր անում...
Եւ վերջումը յուսահատ ի՜նչ անէծք
Ի՜նչ նզովք եղբայրներին էր կարդում...

,, Ես զրի մնքում այն օրվանից,
Որ մի հնարքով ընկերներից
Ազա՛տ լինիմ, և ազա՛տ նորանից,
Որ տանջումէր ինձ անբաժան սրտից։։

,, Բախտի բերմունքով երկուսը նորանցից
Մեռան գնտակով անակնկալ տեղից,
Իսկ միւս խիստ անգութն անհետացաւ
Այնպէս, որ չեղաւ մի լուր նորանից։։

,, Ես այն օրվանից ազատ նորանցից,
Ազատ և խղճմտանքիս ծակոցից,
Ուրախ կեանք եմ վարում ձեզ հետ միասին,
Հեռացած իմ հին սիրած գործերից։։

Բայց և Մաթոսի միջնորդն մաղթեց
Մաթոսին յաջողութիւն և կեանք երկար,
Եւ իւր կամքն ու զօրութիւնն յայտնեց.
Որ պիտի լինի միջնորդ բարերար....։

Ուրաքանչիւրը այդ ընկերներից
Զանազան ոգի և ոյժ ստացած՝
Դուրս եկան այն ոգևորող տանից,
Բաքոսին սիրով պաշտօն մատուցած։

Թ.

Մինչ երեկոյեան բառաչն հորթերի
Թնդումէր գիւղում ամենի բակում։
Սպասումէր թամարն գալուն կովերի,
Մաքուր կթիչը (1) պատրաստ իւր ձեռում։

Թամարը մի օր իրիկնապահին
Մինչ նայումէր բակում կովի գալին,
Մի մարդ մոտեցաւ իրան—թամարին
Տուաւ մի բարի նամակ թանկագին։

(1) կթիչը հողէ կամ պղնձեայ աման է, որի մէջ կթումեն կաթն.

Թրթռաց սիրտը, կապուեց իւր լեզուն,
Երբ ստացաւ լուր և փող Մաթոսից.
Նա ուրախ սրտով թռաւ դէպի տուն,
Որ բերէ նորան մի ընծայ տանից։

Շուտով դարձաւ ձեռին մի ղոյղ դուլայ,
Նամակ բերողին այն տուաւ ընծայ,
Մնայն լուռ քաղցր աչքով և գլխով
Իւր շնորհակալութիւնը յայտնելով։

Այդ իսկ րոպէում եկաւ կովիկը
Բառաչով վազելով դէպ իւր հորթիկը,
Որին արձակեց իւր կապած տեղից,
Եւ ծծացրեց նորա մօր կաթնից։

Աւաւ կթիչը շուտ ուրախ սրտով
Կթեց կովիկը նանամ (1) կանչելով.
Եւ կթած կաթնից տուաւ մի բաժին
Իւր երկոքեակ սիրուն մանուկներին։

(1) Նանամ՝ ցաշկերէն մեծ մօրն են ասում. այդ անունը սովորական է և մեր Հայերի մէջ գիւղօրայքում. որ կով կթողը կովը կթելու ժամանակ եղանակով կրկնում է շատ անգամ։

Երբ մութը տիրեց Թամարի տանը,
Նա վառեց նաւթի ճրագը զօրեղ,
Եւ դրաւ բարձր ճրագակալի վերայ,
Եւ պատրաստեց մանկանց քնելու տեղ։

Նա մինչ փայփայումէր ուրախ սրտով
Իւր մանուկներին քնի երգերով,
Ներս մտաւ իւրեանց դռնիցը յանկարծ
Երկու հարս մի աղջիկ բարեւ տալով։

Դոքա Թամարին հարեւան էին,
Որ տեսել էին նամակաբեր մարդին.
Դոքա եկան աչքալուսի տալու
Եւ մաթոսի գալուց լուր հարցնելու։

Թամարը ծածկեց գետինը շուտով
Հնամաշ պատռուած զորգով կապերտով,
Եւ ընդունեց նորանց քաղցրիկ խօսքերով
Իւր դցած շորի վերայ նստացնելով։

Մէկը նրանցից Թամարին հարցրեց, -
,, Թէ ե՞րբ կդայ Մաթոսն քաղաքից,
Եւ թէ նա ինչո՞ւ այսքան ուշացաւ,
Չեղ այսպէս մենակ կարօտով թողից։ ,,

,, Նա քաղաքում ինչո՞վ է պարապվում,
Ինչո՞ւ նա այստեղ գիւղում չէ՞ մնում.
Մի՞թէ նորա սիրտը չէ կարօտում
Զեզ, կամ գիւղական կեանքը չէ՞ սիրում.

–,, Նա շատ է սիրում գիւղական կեանքը,
Նոյնպէս և մեզ իւր անձնի պէս,
Սակայն ի՞նչ անես, անիրաւ պարտքը. . .
Նորա սիրուց մեզ զրկել է այսպէս. . .

–,, Ա՞ր գիւղում ո՞վ արդեօք նորան օգնեց,
Պարտքի տակից նորան ո՞վ թեթևացրեց.,,
Ո՞ւմ որ խնդրեց, ում գնաց դիմեց,
Ո՞ւ ոք օգնութեան ձեռք չի հասցրեց։ ,,

–,, Թէ և մեր գիւղում մի երկու իշխան
Կան ուռած փքուած կայքով ու փողով.
Նոքա էլ թէ մարդու շահով փող տան,
Կշինեն նորան ստուկ հոգւով մարմնով։ ,,

–,, Յաւիտեան չ'ես ազատուիլ պարտքի տակից.
Որ նոքա բարդումեն միշտ քո վերայ,
Քո ստորագրութիւն մուրհակի տակից
Չէ՛ ջնջուելու, միշտ մնայ ու կմնայ։ ,,

–,, Եթէ փող չունիս, որ հատուցանես.
Նախատինք է, որ թափումեն գլխիդ,
Եւ խլում ձեռքից ինչ ունես չունես,
Թէ ուտելիքդ թէ լծկան կենդանիքդ.

–,, Թէ տանդ կահ ու կարասիքը.
Թէ վարուցանքիդ հարկաւոր գործիքը,
Եւ թէ կալդ ու տունդ և մինչև անգամ
Զուածու հաւերդ ու հաւաբոյնդ։,,

–,, Թէ ունիս միակ ապրուստ մի կով,
Որի կաթնով կերակրումես ընտանիքիդ,
Եւ այն գո՞նէ չեն թողում, որով
Կարենաս կերակրել մանուկներիդ։,,

–,, Դորանով թէ չեն բաւականանում,
Քեզ ստրկի նման իրանց գործում
Ա՛յնքան են չարչարում ու բանացնում. . .
Եւ վերջումը քեզ սոված անօթի
Տխուր հայեացքով են ճանապարհում։

–,, Ի՞նչ ենք խօսում նորանցից անընդհատ,
Նոցա սրտերը քար են, գործերը խիստ վատ,
Եթէ մենք ևս չլինէինք աղքատ,
Գուցէ նորանցից լինէինք շատ վատ ,,

Ց. Խ. Քր. Մ. Պարտիզեկ։

–,, Դու ասա՛ տեսնեմ, իմ քուրի՛կ Ռեհան,
Ձեր Շուշանին ե՞րբ էք նշանադրելու,
Ես լսելեմ թէ Մարկոսանց տղայն
Ցանկանումէ շուտ նշան բերելու։՝

,, Ղո՛րդ է, ասաց Ռեհանը Թամարին.
Բայց մեր անացիք տալ չեն ցանկանում
Մարկոսանց խաչուն մեր Շուշանին,
Ասելով թէ պակասութեամբ է ապրում։՝

,, Նոքա ասումեն ի՞նչ պէտքէ լաւ տղայն,
Երբ չունի լաւ տուն և շատ անասուն,
Եթէ վատ լինի տղայն, փոյթ չէ այն,
Միայն ունենայ փող-հարստութիւն։՝՝

,, Իսկ Շուշանի մայրը ասումէ նորանց-
Ինձ չէ՛ հարկաւոր վատ հարուստ փեսայն,
Որ կպատճառէ միշտ լաց աչքերիս,
Սևացնելով օրերն երեխայիս։...

Շուշանն լուռ նստած օջաղի կողքում
Լսումէր դորանց, մոխիրն հարթելով,
Հարթումէր ունելով և հմայում
Կցկտուր բառեր բերնից հանելով։

Երբ լռեցին նոքա ամենքն,
,, Տե՛ս թամար բաջի, (1) ասաց Շուշանն,-
Մաթոս աբերն շուտ գա՛յ, թէ չգայ. . .
Շուտ գա՛յ թէ չգայ, շուտ գա՛յ թէ չգայ։՝ (2)

---

(1) Բաջի տաճկերէն է, նշանակումէ քոյր, որ այնպէս սովորական է դարձել մեր Հայերի մէջ, որ ոչ միայն հարազատ քրոջն են ասում, այլ և ամեն հասակի իգական սեռին։ Այս խօսակցութեան եղանակը լինումէ ըստ մեծի մասին Հայերի և Տաճիկների մէջ, գործէ դնվում կոչական ժաքով, երբ մէկի ուշադրութիւնը խօսողը դէպի իրան է կամենում դարձնել։

(2) Հայոց գիւղօրայքում կայ և այդ հմայական աւանդութիւնը, զորօրինակ եթէ մէկը ունի մի ցանկութիւն կամ մի ուխտ, և կասկածումէ նորա վերայ, չիմանալով թէ նորա վախճանը ինչպէս է լինելու, նա ունելով (մաշայով) տափակացնումէ օջախի մոխիրը բաւական տարածութեամբ կամ երկարութեամբ, յետոյ ունելով սկսումէ չափել մոխիրը մինչև տարածութեան վերջը. եթէ բացասական պատասխան է ստանում, տրտմումէ, որ իւր ուխտը կամ ցանկութիւնը չի կատարուիլ, բայց եթէ ստորասական, ուրախանումէ թէ կկատարուի։ Բախտի բերմունքով եթէ կատարվումէ, ե՛կ այնու հետև նորան աղատիր

Մի քանի անգամ այսպէս կրկնելով
Տափակ մեխիրը ներհակ դուշակեց,
Որից Շուշանի յոյսը կարելով
Ցրեց մեխիրը և սխուր նստեց։

Յետոյ նարանցից ամեն մէկը հերթով
Հանելուկներ առաջարկեց լուծելու.
Եւ վերջում մի մի առասպել պատմելով
Կամեցան խօսակցութեանը վերջ տալու։

Երբ վերջացաւ առասպելն վերջին,
Թամարի հիւրերն ոտի կանգնեցան,
Եւ խնդրելով շուտ դարձ Մաթոսին,
Սովոր ողջունով գնացին հեռացան։

Նախապաշարմունքից և կամ իւր համոզմունքից, որ ցոյց է տուել մի երկու անգամ մեխիրը և դորա նման ուրիշ հմայական շատ բաներ։ Հաւանական է, որ մեխրի վերայ հմայութիւնը մնած լինի Հայերի մէջ հարևան Պարսիկներից և այն կ ա ա պ ա շ տ ա կ ա ն և կ ր ա կ ա պ ա շ տ ա կ ա ն ժամանակներից։

Ժ.

Հինգ օրից յետո պօլէցիայի դռնում
Կանգնած Մաթոսն պաշտօնի ֆորմով,
Մի մեծ դաշոյն կախած իրա մէջքում,
Կուրծքն էլ զարդարված մի կոլոլ նշանով։

Նորան պատուիրված էր առաջին օրում,
Լինել հնազանդ ոստիկաններին,
Միշտ պատրաստ լինել ամեն մի գործում,
Եւ կատարող ամեն մի հրամանին։

Նա պիտի հսկէր և արգելանոցին,
Որի մէջ կապուած չար մարդիկ կային,
Որ մի զուցէ նորանից արգելուածներ
Դուրս գալով փախչել կարողանային։

Եւ թէ տեսնէ փողոցների խորշերում
Անգործ պատանիներ վատ գործերում,
Նա պիտի գնա շուտով անպանդաղ
Մատնէ նորանց ոստիկանին անյապաղ։

Թէ գիշերային խաղաղ ժամերում
Գտնէ աւազակ մարդ փողոցներում,
Նա անխնայ նորան շուտ բռնելով.
Պիտ տանէ արգելանոց գինուորներով։

Եւ ուր գտնէ մարդ չարագործ կամ արբած,
Այնպիսւոյն ձեռքերը շուտով կապոտած՝
Պիտի յանձնէ հերթապահ ոստիկանին,
Որը հսկումէ արգելանոցին։

ԺԱ.

Մի օր առաւօտ ժամ տասնումէկին
Տիրել էր լռութիւն արգելանոցին,
Սարսափ էր պատել չարագործներին,
Որոնց չարաչար պիտի դանէին։ (1)

Մէկը լուռ սրտաբորոտ շտապով
Մանումէր ատեան քաղաքապետի....
Միւսը կորագլուխ տխուր դէմքով
Դուրս էր գալիս չարացած յայտնի...

Մէկը միւսի ականջում ծածկապէս,
Շշնջումէր բառեր երբեմնապէս...
Բայց և միւսը թագուն արագապէս
Փախչումէր բակից, որ լինի անտես...

Կէս ժամ չանցած դուրս եկաւ ատեանից
Քաղաքապետն սաստիկ վրդովված,
Եւ հրամայեց հանել չարերին բանդից,
Բերել և ձիպատ ջրում փափկացրած....

(1) ԺԵԺԷԻՆ

Իսկոյն կատարուեցաւ նորա հրաման,
Ինքն էլ նստեց վառված աթոռի վերան,
Որի չորս կողմով ծառաներ շարուած,
Սպասումէին հրամանին, պատրաստուած։

Կանգնած էր և Մաթոսն դռան մէջ,
Եւ նայումէր տեսարանին խեղճ խեղճ,
Բայց իւր ընկերներն պատրաստ, վառված,
Ուրախ էին ծեծելու չարերին կապուած։

Առանց հարց ու փորձի ոմանց արձակեց...
Իսկ միւսերին խիստ գանել հրամայեց,
Որոնց մերկացրած սաստիկ գանեցին,
Ոմանց էլ կրկին մութ բանդ գցեցին։

Արիւն էր որ հոսվումէր ծեծվողներից,
Արտասուք էր, որ թափվումէին աչքերից,
Աղաղակ աղաչանք էր, որ լսվումէր
Գետնին հաւասարուած պատժվողներից։

Ո՛չ ոք չէր խնայում ամենևին,
Ոչ ոք չէ՛ր համարձակվում խնդրել մեծին...
Մինչև լռացաւ հաշիւն պատժի,
Մինչ կատարվեց հրաման քաղաքապետի։

ԺԲ.

Մի երեկոյ հերթն հասաւ Մաթոսին,
Որ պիտ լինէր զիշերապահ բանդին,
Նորա հետ միասին մի և նոյն գիշեր՝
Նշանակված էր և մի այլ ընկեր։

Դոքա միասին բանդի անկիւնում
Նստած զիշերային խաղաղ ժամում,
Խօսակցում էին անցած ժամանակից,
Եւ բանդի զզոյշ պահպանութիւնից։

Խնդրեց Մաթոսը իւր այդ ընկերից
Խօսել պատմել իւր լսած տեսածից,
Եւ թէ իւր վիճակի դրութիւնից,
Եւ կամ զո՞հ է արդեօք իւր պաշտօնից...

-,, Ի՞նչ է իմ վիճակը, որ զոհ լինիմ ես,
Ասաց նա Մաթոսին ա՛խ քաշելով,
Եթէ մի արհեստ ունենայի ես,
Կտանջուէի՞ արդեօք այս վատ պաշտօնով...

-,, Փոքրիկ ժամանակ ինձ իմ ծեր հայրս
Տուաւ արհեստի, փախայ նորանից,
Շատ չի տևեց, մեռաւ ծերունի հայրս,
Ես էլ զզկուեցայ նորանից և ուսումից։,,

ՀՀ Ազգային գրադարան
NL0335381